العقيدة الصحيحة وما يضادها

Ճշմարիտ հավատքը և այն, ինչ հակասում է նրան

Ճշմարիտ հավատքը և այն, ինչ հակասում է նրան

Հեղինակ՝

Պատվարժան շեյխ Աբդ ալ-Ազիզ իբն Աբդալլահ իբն Բազ

Գթասիրտ Ալլահի անունով

Նախաբան

Փառք միայն Ալլահին , և խաղաղություն ու օրհնություն թող լինի նրան,որից հետո մարգարե այլևս չկա, ինչպես նաև նրա ընտանիքին ու ուղեկիցներին:

Իսկ այնուհետև. Քանի որ ճշմարիտ հավատամքը

(հավատի ընկալումը)

հանդիսանում է իսլամի կրոնի հիմքը և ամբողջ դավանանքի առանցքը, գտա, որ դա լինի դասախոսության թեման: Քանի որ ըստ Շարիաթի ապացույցների՝ թե՛ Կուռանից, թե՛ Սուննայից, հայտնի է, որ մարդուն վերաբերող արարքներն ու խոսքերը միայն այն ժամանակ են ճշմարիտ և ընդունելի, երբ բխում են ճիշտ հավատամքից: Իսկ եթե հավատամքը շեղված է ու սխալ, ապա այն բոլոր գործերն ու խոսքերը, որ բխում են դրանից, կորցնում են իրենց արժեքը, ինչպես ասել է Բարձրյալ Ալլահը.

﴿الْيَوْمَ أُحِلَّ لَكُمُ الطَّيِّبَاتُ وَطَعَامُ الَّذِينَ أُوتُوا الْكِتَابَ حِلٌّ لَكُمْ وَطَعَامُكُمْ حِلٌّ لَهُمْ وَالْمُحْصَنَاتُ مِنَ الْمُؤْمِنَاتِ وَالْمُحْصَنَاتُ مِنَ الَّذِينَ أُوتُوا الْكِتَابَ مِنْ قَبْلِكُمْ

إِذَا آتَيْتُمُوهُنَّ أُجُورَهُنَّ مُحْصِنِينَ غَيْرَ مُسَافِحِينَ وَلَا مُتَّخِذِي أَخْدَانٍ وَمَنْ يَكْفُرْ بِالْإِيمَانِ فَقَدْ حَبِطَ عَمَلُهُ وَهُوَ فِي الْآخِرَةِ مِنَ الْخَاسِرِينَ٥﴾

«Այսօր ձեզ համար թույլատրվեցին բոլոր բարիքները, և նրանց ուտելիքը, ովքեր աստվածային գիրք էին ստացել՝ թույլատրված է ձեզ համար, ինչպես ձեր ուտելիքը թույլատրելի է նրանց: Եվ ձեզ համար թույլատրված են նաև բարեպաշտ կանայք հավատացյալներից, և բարեպաշտ կանայք նրանցից, ում նախքան ձեզ աստվածային գիրք էր տրվել, եթե նրանց տաք նրանց մահրը (ննջավարձը)՝ որպես ամուսնություն, ոչ թե ամբարոյության կամ գաղտնի կապեր ունենալու համար: Իսկ ով հերքում է հավատը, նրա բոլոր գործերը կորչում են, և նա լինելու է կորուսյալներից Հետին կյանքում»: [Ալ-Մաիդա:5] Ալլահն ասաց.

﴿وَلَقَدْ أُوحِيَ إِلَيْكَ وَإِلَى الَّذِينَ مِنْ قَبْلِكَ لَئِنْ أَشْرَكْتَ لَيَحْبَطَنَّ عَمَلُكَ وَلَتَكُونَنَّ مِنَ الْخَاسِرِينَ٦٥﴾

«Աստծուց հայտնություն է իջեցվել քեզ և նրանց, ովքեր եղել են քեզնից առաջ՝ եթե երբևէ շիրկ գործես (Աստծուն համահավասար դնես), ապա քո բոլոր գործերը կջնջվեն, և դու անշուշտ կգտնվես կորուստ կրողների շարքում»: [Զումար:65] Եւ այս իմաստով բազմաթիվ այաթներ կան Կուռանում:

Աստծու Մեծ Գիրքն ու Նրա հավատարիմ Մարգարեի՝ Մուհամմադի ﷺ Սուննան միաձայն

վկայում են, որ ճշմարիտ հավատքը (աքիդան) ամփոփվում է վեց հիմնասյուներում.

Հավատ Աստծուն, Նրա հրեշտակներին, Նրա գրքերին, Նրա մարգարեներին, Վերջին օրվան և կանխորոշմանը՝ լինի այն բարի թե՛ չար:

Ահա այս վեց դրույթներն են կազմում ճշմարիտ հավատքի հիմքը՝ այն հավատքի, որով է իջեցվել Ալլահի Մեծ Գիրքը՝ Կուռանը, և որի համար Ալլահը ուղարկեց Իր Մարգարեին՝ Մուհամմադին ﷺ: Եվ այս վեց հիմքերից բխում է հավատալու անհրաժեշտությունը բոլոր անտեսանելի իրողություններին, ինչպես նաև այն ամենին, ինչի մասին տեղեկացրել է Ալլահը և Նրա Մարգարեն ﷺ:

Այս վեց հավատքի հիմքերին վերաբերող ապացույցները շատ հաճախ հանդիպում են ինչպես Կուռանում, այնպես էլ Սուննայում: Դրանցից է, օրինակ, Ալլահի հետևյալ խոսքը.

﴿لَيْسَ الْبِرَّ أَنْ تُوَلُّوا وُجُوهَكُمْ قِبَلَ الْمَشْرِقِ وَالْمَغْرِبِ وَلَكِنَّ الْبِرَّ مَنْ آمَنَ بِاللَّهِ وَالْيَوْمِ الْآخِرِ وَالْمَلَائِكَةِ وَالْكِتَابِ وَالنَّبِيِّينَ﴾

«Բարեպաշտությունը ոչ թե ձեր դեմքը դեպի արևելք կամ արևմուտք դարձնելն է, այլ իսկական բարեպաշտը նա է, ով հավատում է Ալլահին, Վերջին օրվան, հրեշտակներին, Գրքին և մարգարեներին» [Ալ-Բաքարա:177] Բարձրյալ Ալլահն ասում է.

﴿آمَنَ الرَّسُولُ بِمَا أُنْزِلَ إِلَيْهِ مِنْ رَبِّهِ وَالْمُؤْمِنُونَ كُلٌّ آمَنَ بِاللَّهِ وَمَلَائِكَتِهِ وَكُتُبِهِ وَرُسُلِهِ لَا نُفَرِّقُ بَيْنَ أَحَدٍ مِنْ رُسُلِهِ﴾

«Առաքյալը հավատաց նրան ինչ իջեցվել է իրեն իր Տիրոջից: Բոլոր հավատացիալները նույնպես հավատացին Ալլահին, Նրա հրեշտակներին, Նրա Գրքերին և Նրա մարգարեներին: Մենք ոչ մեկին տարբերություն չենք դնում Նրա մարգարեների միջից»: [Ալ-Բաքարա:285] Եվ Բարձրյալի խոսքը.

﴿يَا أَيُّهَا الَّذِينَ آمَنُوا آمِنُوا بِاللَّهِ وَرَسُولِهِ وَالْكِتَابِ الَّذِي نَزَّلَ عَلَى رَسُولِهِ وَالْكِتَابِ الَّذِي أَنْزَلَ مِنْ قَبْلُ وَمَنْ يَكْفُرْ بِاللَّهِ وَمَلَائِكَتِهِ وَكُتُبِهِ وَرُسُلِهِ وَالْيَوْمِ الْآخِرِ فَقَدْ ضَلَّ ضَلَالًا بَعِيدًا ١٣٦﴾

«Ովքեր հավատք եք ընդունել, հավատացե՛ք Ալլահին, Նրա Առաքյալին, այն Գրքին, որ Նա իջեցրել է Իր Առաքյալին, և այն Գրքին, որ Նա իջեցրել է մինչ այդ: Իսկ ով անհավատություն է դրսևորում՝ Ալլահի, Նրա հրեշտակների, Նրա Գրքերի, Նրա Առաքյալների և Վերջին օրվա նկատմամբ, նա մոլորվել է խորը մոլորությամբ» [Ան-Նիսա:136] Եվ Բարձրյալի խոսքը.

﴿أَلَمْ تَعْلَمْ أَنَّ اللَّهَ يَعْلَمُ مَا فِي السَّمَاءِ وَالْأَرْضِ إِنَّ ذَلِكَ فِي كِتَابٍ إِنَّ ذَلِكَ عَلَى اللَّهِ يَسِيرٌ ٧٠﴾

«Չգիտե՞ս արդյոք, որ Ալլահը գիտի այն ամենը, ինչ կա երկնքում և երկրի վրա: Այս ամենը Գրքում է արձանագրված: Եվ դա՝ Ալլահի համար հեշտ է» [Հաջջ:70] «Ինչ վերաբերում է այս հավատքի հիմքերի մասին հստակ ու հավաստի հաղորդագրություններին (հադիսներին), ապա դրանք չափազանց շատ են: Դրանցից է հայտնի և հավաստի հադիսը, որը Մուսլիմը փոխանցել է

իր Սահիհ ժողովածուում՝ հավատացիալների առաջնորդ Ումար իբն ալ-Խաթաբի (Ալլահի գոհությունը նրան) միջոցով, որտեղ Ջիբրայիլը (խաղաղություն նրան) հարցնում է Մարգարեից ﷺ հավատքի մասին: Եվ նա պատասխանում է նրան...»

«الإيمان أن تؤمن بالله، وملائكته وكتبه ورسله واليوم الآخر وتؤمن بالقدر خيره وشره» الحديث،

«Հավատքը այն է, որ հավատաս Ալլահին, Նրա հրեշտակներին, Նրա Գրքերին, Նրա Առաքյալներին, Վերջին օրվան, և հավատաս նախասահմանությանը՝ թե՛ նրա բարին, և թե՛ նրա չարը»[1] Այդ հաղորդագրությունը (հադիսը) հիշատակել են երկու մեծ իմամները՝ Բուխարին և Մուսլիմը՝ Աբու Հուրայրայի միջոցով: Այս վեց հիմքերից է բխում այն ամենը, ինչի նկատմամբ մուսուլմանը պարտավոր է հավատք ունենալ՝ կապված Ալլահի էության, վերադարձի օրվա (վերակենդանացման) և մյուս անտեսանելի իրողությունների հետ:

---

[1] Այս հադիսը հիշատակված է՝
Մուսլիմի «Հավատք» գրքում (հադ. №8),
Թիրմզիի «Հավատք» բաժնում (հադ. №2610),
Նասայիի «Հավատք և դրա շեղումները» բաժնում (հադ. №4990),
Աբու Դաուդի «Սուննա» բաժնում (հադ. №4695),
Իբն Մաջայի «Նախաբան» բաժնում (հադ. №63),
և Ահմադ իբն Հանբալի մոտ (1/27):

Հավատք Ալլահին

Հավատալը նրան, որ Ալլահն է միակ ճշմարիտ Աստվածը, և միայն Նա է արժանի երկրպագության՝ առանց որևէ մեկին դարձնելով Նրան համարժեք:

Աստծուն հավատալու մեջ ներառված է այն համոզմունքը, որ Ալլահն է միակ ճշմարիտ Աստվածը, և միայն Նա է արժանի երկրպագության և չկա նրան համարժեքը: Քանի որ Նա է մարդկանց Ստեղծողը, Նա է, ով բարություն է անում նրանց հանդեպ, հոգում է նրանց ապրուստը, գիտի նրանց գաղտնիքն ու բացահայտը: Նա է, ով ունակ է վարձահատույց լինելու Նրան հնազանդ մարդկանց և պատժելու նրանց, ովքեր չեն ենթարկվում: Հենց այս երկրպագության համար է, որ Ալլահը ստեղծել է թե՛ մարդկանց, թե՛ ջիններին և նրանց պատվել այս հրամանով, ինչպես Նա ասել է՝

﴿وَمَا خَلَقْتُ الْجِنَّ وَالْإِنْسَ إِلَّا لِيَعْبُدُونِ٥٦﴾

«Ես ստեղծել եմ ջիններին ու մարդկանց միայն մեկ նպատակի համար՝ որպեսզի նրանք երկրպագեն Ինձ»: [Զարիաթ:56]

﴿مَا أُرِيدُ مِنْهُمْ مِنْ رِزْقٍ وَمَا أُرِيدُ أَنْ يُطْعِمُونِ٥٧﴾

«Ես նրանցից ոչ մի ապրուստ չեմ ցանկանում, և ոչ էլ պահանջում եմ, որ նրանք Ինձ կերակրեն»: [Զարիաթ:57]

﴿إِنَّ اللَّهَ هُوَ الرَّزَّاقُ ذُو الْقُوَّةِ الْمَتِينُ٥٨﴾

«Իսկապես Ալլահն է Անենապարգևատուն, ուժի Տերը, Անսասան Ուժեղը»: [Զարիաթ:58] Փառավորն ասել է.

﴿يَا أَيُّهَا النَّاسُ اعْبُدُوا رَبَّكُمُ الَّذِي خَلَقَكُمْ وَالَّذِينَ مِنْ قَبْلِكُمْ لَعَلَّكُمْ تَتَّقُونَ ٢١﴾

«Մարդիկ, երկրպագեցե՛ք ձեր Տիրոջը՝ Նրան, Ով ձեզ ստեղծեց, ինչպես նաեւ նրանց, ովքեր եղել են ձեզնից առաջ, որպեսզի դուք բարեպաշտ լինեք ու խուսափեք մեղքերից»: [Բաքարա:21]

﴿الَّذِي جَعَلَ لَكُمُ الْأَرْضَ فِرَاشًا وَالسَّمَاءَ بِنَاءً وَأَنْزَلَ مِنَ السَّمَاءِ مَاءً فَأَخْرَجَ بِهِ مِنَ الثَّمَرَاتِ رِزْقًا لَكُمْ فَلَا تَجْعَلُوا لِلَّهِ أَنْدَادًا وَأَنْتُمْ تَعْلَمُونَ ٢٢﴾

«Նա է, Ով ձեզ համար երկիրը դարձրել է հարթ մակերես՝ որպես անկողին, երկինքը՝ որպես շինվածք, և երկնքից ջուր է իջեցրել, որով դուրս է բերել պտուղներ՝ որպես ապրուստ ձեզ համար: Ուրեմն մի՛ դասեք Ալլահին համահավասարներ, մինչդեռ դուք գիտեք (որ չկա Նրան հավասար ոչ ոք)»: [Բաքարա:22] Ալլահը ուղարկել է Իր Առաքյալներին և իջեցրել է Սուրբ Գրքերը, որպեսզի բացահայտի այս ճշմարիտ ուղին, հրավիրի մարդկանց դեպի այն և զգուշացնի այն ամենից, ինչը հակադրվում է այդ ճշմարտությանը, ինչպես ասել է Փառաբանված Բարձրյալը:

﴿وَلَقَدْ بَعَثْنَا فِي كُلِّ أُمَّةٍ رَسُولًا أَنِ اعْبُدُوا اللَّهَ وَاجْتَنِبُوا الطَّاغُوتَ﴾

«Մենք յուրաքանչյուր ազգի Առաքյալ ենք ուղարկել՝ այս պատգամով. Երկրպագեցե՛ք միայն Ալլահին և հեռու մնացե՛ք կուռքերից ու

կեղծ աստվածություններից»: [Նահլ:36] Ալլահն ասաց.

﴿وَمَا أَرْسَلْنَا مِنْ قَبْلِكَ مِنْ رَسُولٍ إِلَّا نُوحِي إِلَيْهِ أَنَّهُ لَا إِلَهَ إِلَّا أَنَا فَاعْبُدُونِ٢٥﴾

«Քեզնից առաջ մենք որևէ Առաքյալ չենք ուղարկել, ում չհայտնեինք այս պատգամը՝ չկա ուրիշ աստվածություն՝ բացի Ինձանից: Ուրեմն երկրպագեցե՛ք Ինձ»: [Անբիյա:25] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը

﴿الر كِتَابٌ أُحْكِمَتْ آيَاتُهُ ثُمَّ فُصِّلَتْ مِنْ لَدُنْ حَكِيمٍ خَبِيرٍ ١ أَلَّا تَعْبُدُوا إِلَّا اللَّهَ إِنَّنِي لَكُمْ مِنْهُ نَذِيرٌ وَبَشِيرٌ ٢﴾

«Ալիֆ-Լամ-Ռա:

Սա է Գիրքը, որի այաթները հաստատուն և իմաստությամբ ամրագրված են, ապա մանրամասն բացատրված՝

Նրա կողմից, Ով Իմաստուն է և Ամենագետ»:

Որպեսզի չերկրպագեք ոչ ոքի՝ բացի Ալլահից:

Քանզի ես ձեզ համար Նրանից եմ ուղարկված՝ որպես զգուշացնող և բարի ավետիս բերող»: [Հուդ:1-2] Իսկ այս երկրպագության էությունը կայանում է նրանում, որ

Մեծափառ Ալլահը

միակն ու բացառիկը ճանաչվի ամենայն այն արարքների մեջ, որոնցով ծառաները երկրպագում են՝

ինչպիսիք են աղոթքը, երկյուղը, հույսը, նամազը, պահեցողությունը, զոհաբերությունը, ուխտը և բոլոր մնացած երկրպագության ձևերը՝

իրական խոնարհությամբ, անկեղծ ձգտումով և երկյուղով՝

լիակատար սիրով առ Ալլահը և խոնարհությամբ Նրա Մեծության առաջ:

﴿فَاعْبُدِ اللَّهَ مُخْلِصًا لَهُ الدِّينَ ٢ أَلَا لِلَّهِ الدِّينُ الْخَالِصُ﴾

«Ուստի երկրպագի՛ր Ալլահին՝ մաքրասիրտ նվիրվածությամբ՝

Նրան առանձնացնելով ողջ դավանանքի մեջ:

Իսկապես, միայն Ալլահին է վայել միանձնյա և անկեխած պաշտամունքը»: [Զումար:2-3] Եվ Բարձրյալի խոսքը.

﴿وَقَضَىٰ رَبُّكَ أَلَّا تَعْبُدُوٓاْ﴾

«Եվ քո Տերը վճռել է՝ որ չերկրպագեք ոչ ոքի՝ բացի Նրանից»: [Իսրա:23] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը.

﴿فَادْعُوا اللَّهَ مُخْلِصِينَ لَهُ الدِّينَ وَلَوْ كَرِهَ الْكَافِرُونَ ١٤﴾

«Երկրպագեցե՛ք Ալլահին՝ մաքրասիրտ նվիրվածությամբ միայն Նրան, թեկուզ և դա ծանր լինի անհավատներին»: [Ղոֆիր:14] Եվ ըստ երկուսի՝ Սահիհ ալ-Բուխարիի և Սահիհ Մուսլիմի, Մուազ իբն Ջաբալից (թող Ալլահը գոհ լինի նրանից), փոխանցված է, որ Մարգարեն ﷺ ասել է.»

«حق الله على العباد أن يعبدوه ولا يشركوا به شيئا».

«Ալլահի իրավունքը Իր ծառաների նկատմամբ այն է, որ նրանք երկրպագեն միայն Նրան՝ առանց Նրան համահավասար դարձնելու:»

[1]

Հավատքն այն ամենի հանդեպ, ինչ Ալլահը պարտադիր է դարձրել Իր ծառաների համար՝ իսլամի հինգ հիմնական և տեսանելի պարտադիր սյուները:

Եվ Ալլահի հանդեպ հավատի մեջ մտնում է նաև այն ամենի հանդեպ հավատքը, ինչ Նա պարտադիր է դարձրել Իր ծառաների համար՝ իսլամի հինգ պարտադիր սյուները. այն է՝ վկայել, որ չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության, բացի Ալլահից, և որ Մուհամմադը Նրա Առաքյալն է ﷺ, կատարել նամազը, տալ զաքաթը, պահել Ռամազանի ծոմը և ուխտագնացություն կատարել դեպի Ալլահի Սուրբ Տունը՝ ով ունի հնարավորություն, ինչպես նաև այն բոլոր մյուս պարտականությունները, որոնք բերվել են մաքուր շարիաթով:

Այս սյուներից ամենակարևորն ու վեհագույնը այն վկայությունն է, որ չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության՝ բացի Ալլահից, և որ Մուհամմադը Նրա Առաքյալն է ﷺ: «Չկա աստվածություն բացի Ալլահից» վկայությունը ենթադրում է երկրպագությունը մաքուր կերպով

---

[1] Այս հադիսը վերապատմվում է Սահիհ ալ-Բուխարիում՝ «Ջիհադ և Ուղևորություններ» բաժնում (2701),
Սահիհ Մուսլիմում՝ «Իման» բաժնում (30),
Տիրմիզիի մոտ՝ «Իման» (2643),
Իբն Մաջայի մոտ՝ «Ջուհդ» (4296),
և Մուսնադում՝ Ահմադ իբն Հանբալի մոտ (5/238):

ընծայել միայն Ալլահին՝ մերժելով այն բոլոր արարածներին, որոնց երկրպագում են Նրա փոխարեն: Ահա սա է «Լա իլահա իլլա Ալլահ» վկայության իմաստը՝ այն է՝ չկա որևէ իրավունքով երկրպագման արժանի էակ բացի Ալլահից: Իսկ ով էլ որ երկրպագվում է Ալլահից բացի՝ լինի մարդ, հրեշտակ, ջին կամ որևէ այլ արարած, ապա նրան երկրպագելը սուտ և մերժելի է, մինչդեռ միակ ճշմարիտ երկրպագման արժանին Ալլահն է միակ, ինչպես Նա Իրեն մասին ասել է.

﴿ذَٰلِكَ بِأَنَّ اللَّهَ هُوَ الْحَقُّ وَأَنَّ مَا يَدْعُونَ مِنْ دُونِهِ هُوَ الْبَاطِلُ﴾

«Սա (այդպես է), որովհետև Ալլահն է ճշմարիտը, իսկ նրանք, ում երկրպագում են Նրա փոխարեն, սուտ ու անճշմարիտ են»: [Հաջջ:62] Արդեն իսկ բացատրվել է, որ Ալլահը՝ Փառավոր և Մեծարելի, ստեղծել է մարդկանց և ջիններին այս մեծ ու հիմնարար նպատակի համար, նրանց այդ նպատակով պարտավորեցրել, ուղարկել է Իր Առաքյալներին ու իջեցրել Իր Սուրբ Գրքերը: Խորապես մտածիր դրա շուրջ և մտածիր երկար, որպեսզի պարզ տեսնես, թե որքան ծանր վիճակի մեջ են ընկել շատ մուսուլմաններ այս հիմնարար ճշմարտության հարցում՝ այն աստիճան, որ երկրպագեցին Ալլահի հետ միասին ուրիշներին և ընծայեցին Նրա մաքուր ու բացառիկ իրավունքը ուրիշ էակների: Միայն Ալլահից է օգնությունը:

Հավատալ այն բանին, որ Ալլահն է ողջ աշխարհի Ստեղծողը, Նա է, ով ղեկավարում է նրանց գործերը և տնօրինում է նրանց կյանքը՝ ըստ Իր Գիտության և Իշխող Ուժի:

Եվ Ալլահի հանդեպ հավատի անբաժան մասն է՝ հավատալը, որ Նա է ամբողջ աշխարհի Ստեղծողը, Նա է, ով տնօրինում և կարգավորում է նրանց գործերն ըստ Իր Գիտության ու Իշխող Ուժի, ինչպես կամենա՝ փառահեղ է Նա: Նա է աշխարհիկ կյանքի և հետմահու կյանքի Տերը, բոլոր աշխարհների Տեր: Չկա ուրիշ Ստեղծող բացի Նրանից, և չկա այլ Տեր, բացի Նրանից: Եվ որ Նա է, ով ուղարկեց Առաքյալներին և իջեցրեց Սուրբ Գրքերը՝ Իր ծառաներին ուղղելու և նրանց կոչ անելու դեպի այն ամենը, ինչ ապահովում է նրանց փրկությունն ու բարօրությունը թե՛ այս աշխարհում, թե՛ հավիտենական կյանքում: Եվ որ Նա է Փառավորը և չունի որևէ բաժնեկից այս ամենում, ինչպես ասաց Բարձրյալը.

﴿اللَّهُ خَالِقُ كُلِّ شَيْءٍ وَهُوَ عَلَى كُلِّ شَيْءٍ وَكِيلٌ ٦٢﴾

«Ալլահը ամեն բանի Ստեղծողն է, և Նա է ամեն բանի Խնամակալը»: [Զումառ:62] Ալլահն ասաց.

﴿إِنَّ رَبَّكُمُ اللَّهُ الَّذِي خَلَقَ السَّمَاوَاتِ وَالْأَرْضَ فِي سِتَّةِ أَيَّامٍ ثُمَّ اسْتَوَى عَلَى الْعَرْشِ يُغْشِي اللَّيْلَ النَّهَارَ يَطْلُبُهُ حَثِيثًا وَالشَّمْسَ وَالْقَمَرَ وَالنُّجُومَ مُسَخَّرَاتٍ بِأَمْرِهِ أَلَا لَهُ الْخَلْقُ وَالْأَمْرُ تَبَارَكَ اللَّهُ رَبُّ الْعَالَمِينَ ٥٤﴾

«Անշուշտ, ձեր Տերը Ալլահն է՝ Նա, Ով ստեղծեց երկինքները և երկիրը վեց օրվա

ընթացքում, ապա բարձրացավ Իր Գահի վրա: Նա գիշերով պատում է ցերեկը, որը շտապ հետևում է նրան: Արևը, լուսինը և աստղերը ենթարկվում են Նրա հրամանին: Ահա՛, Նրան է պատկանում և՛ ստեղծագործությունը, և՛ հրամանը: Օրհնյալ է Ալլահը՝ բոլոր աշխարհների Տերը »: [Ալ-Ա'րաֆ:54]:

Հավատալ Ալլահի Լավագույն Անուններին և Վեհագույն Բնութագրերին՝ առանց խեղաթյուրելու, մերժելու, ձևակերպելու կամ նմանեցնելու:

Եվ Ալլահի հանդեպ հավատքի մեջ է մտնում նաև հավատալը Նրա Լավագույն Անուններին և Վեհագույն Բնութագրերին՝ ինչպես որ հիշատակված են Նրա Վեհ Գրքում և հաստատված են Նրա հավատարիմ Առաքյալի ﷺ միջոցով: Այս բոլորն ընդունվում են առանց խեղաթյուրելու, մերժելու, կերպավորելու կամ Նրան որևէ բանի նմանեցնելու: Անհրաժեշտ է թողնել դրանք ինչպես որ եկել են՝ առանց «ինչպես» հարց տալու՝ միաժամանակ հավատալով այն վեհ ու բարձրիմաստ նշանակություններին, որոնք այդ Անուններն ու Բնութագրությունները իրենց մեջ ներառում են: Այդ բոլորն Ալլահի՝ Փառավոր և Մեծարելի, հատկություններն են, որոնցով Նրան պետք է վերագրել՝ այնպես, ինչպես վայել է Նրան, առանց Նրան նմանեցնելու արարածներին որևէ հատկությամբ: Ինչպես ասել է Բարձրյալ Ալլահը.

﴿لَيْسَ كَمِثْلِهِ شَيْءٌ وَهُوَ السَّمِيعُ الْبَصِيرُ﴾

«Նրան նման ոչինչ չկա, և Նա է Լսողը և Տեսնողը»: [Շուրա:11] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը

﴿فَلَا تَضْرِبُوا لِلَّهِ الْأَمْثَالَ إِنَّ اللَّهَ يَعْلَمُ وَأَنْتُمْ لَا تَعْلَمُونَ ٧٤﴾

«Մի՛ համեմատեք Ալլահին ուրիշների հետ: Ալլահը գիտե, իսկ դուք չգիտեք»: [Նահլ:74] Եվ ահա սա է Սուննայի և Համայնքի (Ահլ աս-Սուննա ուալ-Ջամաա) հավատամքը՝ Ալլահի Առաքյալի ﷺ սահաբիների (ուղեկիցների)և նրանց բարի հետևողների հավատքը:

Այս հավատամքն է, որ վերագրել է նաև իմամ Աբուլ-Հասան ալ-Աշարին (Ալլահի օրհնությունը նրան) իր «Ասհաբ ալ-Հադիսի և Ահլ աս-Սուննայի ներկայացուցիչների մասին» գրքում, ինչպես նաև այն փոխանցել են բազմաթիվ այլ գիտնականներ ու հավատացյալներ:

Իմամ Ալ-Ավզահին՝ Ալլահը թող ողորմի նրան, ասել է.

«Երբ Ալլահի հատկությունների մասին այաթների վերաբերյալ հարց տվեցին իմամ Ջուհրիին ու Մաքհուլին, նրանք պատասխանեցին. «Թող դրանք ընդունվեն այն ձևով, ինչպես իջեցվել են»: Ալ-Ուալիդ իբն Մուսլիմը՝ Ալլահը թող ողորմի նրան, ասել է.

«Երբ Մալիքին, ալ-Ավզահին, ալ-Լայս իբն Սաադին և Սուֆյան աս-Սաուրիին՝ Ալլահը թող ողորմի բոլորին, հարցրին Ալլահի

հատկությունների վերաբերյալ հասած հաղորդագրությունների մասին, նրանք բոլորը պատասխանեցին . « Դրանք ընդունվեն այնպես, ինչպես եկել են՝ առանց հարցնելու “ինչպես”»: Իմամ Ալ-Ավզաին՝ Ալլահը թող ողորմի նրան, ասել է.

«Մենք՝ և թաբիիների մեծ մասը, լինելով միասին, ասում էինք. «Ալլահը՝ Փառավորված ու Բարձր է Նա, գտնվում է Իր գահի վրա», և հավատքով ընդունում էինք բոլոր այն հատկությունները, որոնք փոխանցվել են Սուննայով»: Երբ Ռաբիա իբն Աբի Աբդ առ-Ռահմանին՝ իմամ Մալիքի ուսուցչին (Ալլահը թող ողորմի երկուսին էլ) հարցրին «Իստիվա»-ի մասին (այսինքն՝ Ալլահի բարձրացումը գահի վրա), նա պատասխանեց.

«Իստիվան (բարձրանալը) անհայտ չէ, իսկ «ինչպե՞ս»-ը հասանելի չէ բանականությանը: Ալլահից է ուղերձը, Առաքյալից ﷺ՝ պարզ փոխանցումը, իսկ մեզնից՝ հաստատումը (հավատքով ընդունելը)»: Երբ իմամ Մալիքին՝ Ալլահը թող ողորմի նրան, այս հարցի մասին հարցրին, նա պատասխանեց.

«Իստիվան (բարձրացումը)՝ հայտնի է, բայց “ինչպե՞ս”-ը՝ անհայտ է: Հավատալը՝ պարտադիր է, իսկ այդ մասին հարցեր տալը՝ բիդա՛թ (նորամուծություն) է»:

Այնուհետեւ նա նայեց հարց տվողին ու ասաց. «Ես քեզ չար մարդ եմ տեսնում», և հրամայեց նրան դուրս հանել:

Այս իմաստով խոսք է փոխանցվել նաև հավատացյալների մոր՝ Ում Սալամայից՝ Ալլահը թող գոհ լինի նրանով:

Իմամ Աբու Աբդ ար-Ռահման իբն ալ-Մուբարաքը՝ Ալլահը թող ողորմի նրան, ասել է. Մենք ճանաչում ենք մեր Տիրոջը՝ Փառավորված է Նա, որպես Նրան, Որը վեր է Իր երկինքների վրա, Իր Գահի վրա, առանձնացված է Իր արարածներից: Այդ թեմայի վերաբերյալ իմամների խոսքերը չափազանց շատ են, և հնարավոր չէ դրանք բոլորը նշել այս դասախոսության ընթացքում: Իսկ ով ցանկանում է խորությամբ ծանոթանալ դրանցից շատերին, թող վերադառնա այն գրքերին, որոնք այս ուղղությամբ գրել են սուննի գիտնականները, օրինակ՝ «Աս-Սուննա» գիրքը՝ հեղինակած իմամ Ահմադ իբն Հանբալի որդի Աբդուլլահի կողմից, «Աթ-Տաուհիդ» գիրքը՝ վեհանձն իմամ Մուհամմադ իբն Խուզեյմայի կողմից, «Աս-Սուննա» գիրքը՝ Աբու ալ-Քասիմ ալ-Լալաքաիի կողմից, ինչպես նաև «Աս-Սուննա» գիրքը՝ Աբու Բաքր իբն Աբի Ասիմի կողմից:

Նշենք նաև Շեյխ իսլամ Իբն Թեյմիյյայի պատասխանը Համայի բնակիչներին: Դա մեծ արժեք ունեցող պատասխանի օրինակ է, որի

մեջ նա՝ Ալլահը թող ողորմի նրան, մանրամասն բացատրել է սուննի ուղղության հավատքը, փոխանցել է նրանց խոսքերից շատերը, ինչպես նաև բերել է թե՛ շարիաթական, և թե՛ բանական ապացույցներ՝ սուննիների համոզմունքի ճշմարտացիության և նրանց հակառակորդների մերժելիության մասին: Նույն կերպ և նրա հայտնի «Թադմուրիյա» կոչվող ուղերձում, նա ընդարձակել է խոսքը, մանրամասն ներկայացրել է Ահլ սուննայի հավատքը՝ հիմնվելով թե՛ հայտնությամբ (շարիաթական ապացույցներով), և թե՛ բանականությամբ, և անդրադարձել է հակառակորդներին հակաճառությամբ, որն ի հայտ է բերում ճշմարտությունը և ջախջախում է սուտը՝ յուրաքանչյուր այն մարդու համար, ով այդ ուղերձը կկարդա անկեղծ մտադրությամբ և ճշմարտությունը ճանաչելու ցանկությամբ:

Եվ ով էլ որ հակադրվում է Ահլ սուննայի դավանանքին Ալլահի անունների և հատկությունների հարցում, անկասկած նա հակասության մեջ է ընկնում թե՛ շարիաթական, և թե՛ բանական ապացույցների հետ, և նրա խոսքերում ի հայտ է գալիս բացահայտ հակասություն՝ թե՛ այն բանում, ինչ հաստատում է, և թե՛ այն բանում, ինչ մերժում է:

Իսկ Ահլ աս-Սուննա և ալ-Ջամաա՛այի հետևորդները հաստատում են Ալլահի համար

այն ամենը, ինչ Նա Ինքը հայտնել է Իր վեհ Կուռանում կամ ինչ Նրա Առաքյալ Մուհամմադը ﷺ վերագրել է Նրան իր վստահելի Սուննայով՝ առանց որևէ նմանեցման: Նրանք վեր են դասում Նրան ստեղծվածների նմանությունից՝ միաժամանակ հեռու մնալով Նրա հատկությունների ժխտումից կամ խեղաթյուրումից: Այսպիսով նրանք ապահովվել են հակասություններից և հետևել են բոլոր հաստատուն ապացույցներին: Այդպես է Ալլահի օրենքը՝ նրանց նկատմամբ, ովքեր ամուր կառչում են այն ճշմարտությանը, որով ուղարկվել են Առաքյալները, և ովքեր իրենց ողջ կարողությամբ ձգտում են դրան՝ մաքուր ու անկեղծ մտադրությամբ միայն Ալլահի համար: Նա նրանց ուղղում է դեպի ճշմարիտ ուղի և ամրապնդում նրանց փաստարկները, ինչպես որ ասել է Ալլահը.

﴿بَلْ نَقْذِفُ بِالْحَقِّ عَلَى الْبَاطِلِ فَيَدْمَغُهُ فَإِذَا هُوَ زَاهِقٌ﴾

«Ճշմարտությունը Մենք հարվածում ենք սուտին այնպես, որ այն խորտակում է նրան, և սուտը փլվում ու կորչում է» [Անբիյա:18] Ալլահն ասաց.

﴿وَلَا يَأْتُونَكَ بِمَثَلٍ إِلَّا جِئْنَاكَ بِالْحَقِّ وَأَحْسَنَ تَفْسِيرًا٣٣﴾

«Նրանք ոչ մի առարկություն չեն բերում քեզ, առանց այն բանի, որ Մենք հայտնենք քեզ դրա մեջ ճշմարտությունն ու դրա ամենալավ բացատրությունը» [Ֆուրկան:33] Մեծ

հադիսագետ Իբն Քասիրը (Ալլահի օրհնությունը նրան) իր հայտնի մեկնաբանությունում (տաֆսիրում) անդրադարձել է այս հարցին,երբ մեկնաբանում էր այս վեհ խոսքը Ալլահի՝ Փառք Նրան ու Մեծություն.

«Իսկ ձեր Տերը Ալլահն է՝ Նա, Ով ստեղծեց երկինքներն ու երկիրը վեց օրում, ապա բարձրացավ Գահի վրա» [Ալ-Առաֆ:54] Այս թեմայի վերաբերյալ նա արտահայտվել է գեղեցիկ ու հիմնավոր խոսքով, որը արժե բերել այստեղ՝նրա մեծ օգտակարության պատճառով: Ալլահը ողորմի նրան, նա ասել է.

«Այս հարցի շուրջ մարդկանց կարծիքները շատ ու բազմազան են, բայց սա այն տեղը չէ, որտեղ դրանց բոլորին կարելի է հանգամանալից անդրադառնալ: Մենք այստեղ հետևում ենք սալաֆ աս-սալիհի (արդար նախնիների) ուղուն, որոնցից են՝ Մալիք իբն Անասը, Ալ-Ավզաին, Սաուրին, Լայս իբն Սաադը, Շաֆիհին, Ահմադ իբն Համբալը, Իսհաք իբն Ռահավեյհը և ուրիշներ՝ իսլամի առաջնորդներից՝ թե՛ անցյալում, թե՛ մեր ժամանակներում:»

«Նրանց ուղին այն է, որ ընդունում են Ալլահի վերագրած հատկությունները այնպես, ինչպես դրանք եկել են՝ առանց նմանեցման, առանց ձևակերպման և առանց ժխտման: Իսկ այն պատկերացումը, որը առաջանում է նմանեցնողների մտքում, իբր թե Ալլահն ինչ-որ բանով նման է Իր արարածներին

բացարձակապես մերժելի է: Որովհետև Ալլահին ոչինչ նման չէ. «Նրա նման ոչինչ չկա. Նա է Լսողը և Տեսնողը»»:

«Իրականությունն այն է, ինչ ասել են իմամները՝ նրանցից Նուʿայմ իբն Համմադը՝ Իմամ Բուխարիի ուսուցիչը, ով ասել է. «Ով նմանեցնում է Ալլահին Իր արարածներին՝ նա անհավատ է: Եվ ով ժխտում է այն, ինչ Ալլահն է վերագրել Իրեն, նա նույնպես անհավատ է: Սակայն այն, ինչով Ալլահն է նկարագրել Իրեն կամ Նրան նկարագրել է Նրա Առաքյալը ﷺ, այդ ամենում նմանեցում չկա»:»

«Ուստի, ով հաստատում է Ալլահի համար այն, ինչ իջեցվել է հստակ այաթներով և վստահելի հադիսներով՝ մի կերպով, որը վայել է Նրա վեհությանը, և միաժամանակ մերժում է Ալլահին վերագրել որևէ թերություն նա է բռնել ճշմարիտ ուղին»:

Հավատք հրեշտակներին

Ինչ վերաբերում է հրեշտակներին հավատալուն՝ սա ներառում է ինչպես ընդհանրական, այնպես էլ մանրամասն հավատքը: Մուսուլմանը հավատում է, որ Ալլահը հրեշտակներ է ստեղծել Իրեն մաքուր երկրպագության և հնազանդության համար: Նրանք պատվարժան ծառաներ են, որոնք երբեք

չեն նախորդում Նրան խոսքով և կատարում են Նրա ամեն հրամանը՝ անվերապահորեն:

﴿يَعْلَمُ مَا بَيْنَ أَيْدِيهِمْ وَمَا خَلْفَهُمْ وَلَا يَشْفَعُونَ إِلَّا لِمَنِ ارْتَضَى وَهُمْ مِنْ خَشْيَتِهِ مُشْفِقُونَ٢٨﴾

«Նա գիտի այն ամենը, ինչ նրանց առջևում է և ինչ նրանց հետևում է: Նրանք միջնորդում են միայն այն անձի համար, ում Նա է հավանություն տվել: Իսկ նրանք (այսինքն՝ հրեշտակները) վախով ու երկյուղով են լցված Նրա հանդեպ»: [Անբիյա:28] Նրանք բազմազան դասերի են պատկանում. նրանցից կան, ովքեր պատասխանատու են գահը կրելու համար, կան նաև նրանք, ովքեր պահպանում են դրախտն ու դժոխքը, և կան նաև այն հրեշտակները, ովքեր պահպանում են մարդկանց գործերը:

Մենք հավատում ենք ինչպես ընդհանրապես բոլոր հրեշտակներին, այնպես էլ հատուկ անուններով հիշատակվածներին՝ ըստ Կուռանի և Առաքյալի ﷺ ուսուցման: Նրանց թվում են Ջիբրիլը, Միքայիլը, Մալիկը — դժոխքի պահապանը, և Իսրաֆիլը, որին հանձնարարված է փողի մեջ փչել (այսինքն՝ Ահեղ Դատաստանի օրը ազդարարել):

Իսրաֆիլի մասին հիշատակված է հուսալի և ճիշտ հաստատված հադիսներում: Ալ-Բուխարիի և Մուսլիմի ժողովածուներում Աիշան (թող Ալլահը գոհ լինի նրանից) հաղորդում է, որ Մարգարեն ﷺ ասել է...»

«خلقت الـملائكة من نور وخلق الجان من مارج من نار وخلق آدم مما وصف لكم»

«Հրեշտակները ստեղծվել են լույսից, ջիները՝ ծուխ չպարունակող կրակի բոցից, իսկ Ադամը՝ նրանից, ինչի մասին ձեզ արդեն հայտնել են»[1]: Այս խոսքը բերված է Մուսլիմի կողմից՝ իր «Սահիհ» ժողովածուում (հավաստի հադիսների ժողովածուում)»:

Հավատք Սուրբ գրքերի նկատմամբ

Նույն կերպ՝ հավատքը Սուրբ Գրքերին պահանջում է, որ մուսուլմանն ընդհանրական ձևով հավատա, որ Ալլահը՝ Փառահեղն ու Մեծարելին, իջեցրել է Սուրբ Գրքեր Իր մարգարեներին և առաքյալներին՝ Իր իրավունքը բացատրելու և մարդկանց Իրեն երկրպագելու կոչ անելու նպատակով, ինչպես ասում է Բարձրյալը.

﴿لَقَدْ أَرْسَلْنَا رُسُلَنَا بِالْبَيِّنَاتِ وَأَنْزَلْنَا مَعَهُمُ الْكِتَابَ وَالْمِيزَانَ لِيَقُومَ النَّاسُ بِالْقِسْطِ﴾

«Մենք ուղարկեցինք Մեր առաքյալներին հստակ ապացույցներով, և իջեցրինք նրանց հետ Սուրբ Գիրքը և արդարության կշեռքը, որպեսզի մարդիկ հաստատեն արդար դատաստանը»: [Հադիդ:25] Ալլահն ասաց.

﴿كَانَ النَّاسُ أُمَّةً وَاحِدَةً فَبَعَثَ اللَّهُ النَّبِيِّينَ مُبَشِّرِينَ وَمُنْذِرِينَ وَأَنْزَلَ مَعَهُمُ الْكِتَابَ بِالْحَقِّ لِيَحْكُمَ بَيْنَ النَّاسِ فِيمَا اخْتَلَفُوا فِيهِ وَمَا اخْتَلَفَ فِيهِ﴾

---

[1] Մուսլիմ՝ «Ասկետիզմի և սրտի հեզեցման» բաժին (հադիս №2996), Ահմադ (հատոր 6, էջ 153):

«Սկզբում մարդիկ մեկ միասնական համայնք էին: Բայց երբ նրանք տարաձայնությունների մեջ ընկան, Ալլահը ուղարկեց Մարգարեներին՝ որպես բարի խոստումների փոխանցողներ և նախազգուշացնողներ: Նա իջեցրեց նրանց հետ ճշմարիտ Գիրքը՝ որպեսզի այն դատի մարդկանց մեջ՝ նրանց վեճերի շուրջ:» [Ալ-Բակարա:213]

Մենք հավատում ենք առանձին-առանձին այն գրքերին, որոնց անունները նշել է Ալլահը՝ Թաուրաթը (Տորան), Ինջիլը (Ավետարան), Զաբուրը և Կուռանը(Ղուրան): Կուռանը դրանցից ամենագերազանցն է, վերջինը և ամփոփողը: Այն վերահսկում է նախորդ բոլոր գրքերին և հաստատում է դրանց մեջ եղած ճշմարտությունները:

Կուռանը այն գիրքն է, որը պարտադիր է հետևել ամբողջ մարդկության համար՝ միաժամանակ ընդունելով նաև այն, ինչ հավաստի կերպով փոխանցվել է Ալլահի Առաքյալի ﷺ սուննայով: Քանզի Ալլահը ուղարկեց Մուհամմադին ﷺ՝ որպես մարգարե և առաքյալ ողջ մարդկության և ջինների համար՝ և նրան ուղարկեց Կուռանը, որպեսզի մարդիկ դատեն դրա միջոցով:

Ալլահը Կուռանը դարձրել է սրտերի բուժում, յուրաքանչյուր բանի բացատրություն, առաջնորդություն և ողորմություն՝ հավատացյալների համար:

Ինչպես ասել է Ալլահը.»

﴿وَهَٰذَا كِتَابٌ أَنزَلْنَاهُ مُبَارَكٌ فَاتَّبِعُوهُ وَاتَّقُوا لَعَلَّكُمْ تُرْحَمُونَ١٥٥﴾

«Սա է Գիրքը, որը Մենք իջեցրել ենք՝ օրհնությամբ լցված: Հետևեցե՛ք նրան և եղեք երկյուղած, որպեսզի արժանանաք Ալլահի ողորմությանը»: [Ալ-Անղամ:155] Փառավորն ասել է.

﴿ وَنَزَّلْنَا عَلَيْكَ الْكِتَابَ تِبْيَانًا لِكُلِّ شَيْءٍ وَهُدًى وَرَحْمَةً وَبُشْرَى لِلْمُسْلِمِينَ﴾

«Եվ Մենք իջեցրել ենք Քեզ վրա Այս Գիրքը որպես ամեն բանի հստակ բացատրություն, առաջնորդություն, ողորմություն և բարի ավետիս մուսուլմանների համար»: [Ան-Նահլ:89] Ալլահն ասաց.

﴿قُلْ يَا أَيُّهَا النَّاسُ إِنِّي رَسُولُ اللَّهِ إِلَيْكُمْ جَمِيعًا الَّذِي لَهُ مُلْكُ السَّمَاوَاتِ وَالْأَرْضِ لَا إِلَٰهَ إِلَّا هُوَ يُحْيِي وَيُمِيتُ فَآمِنُوا بِاللَّهِ وَرَسُولِهِ النَّبِيِّ الْأُمِّيِّ الَّذِي يُؤْمِنُ بِاللَّهِ وَكَلِمَاتِهِ وَاتَّبِعُوهُ لَعَلَّكُمْ تَهْتَدُونَ١٥٨﴾

«Ասա. «Ո՛վ մարդիկ, ես Ալլահի Առաքյալն եմ՝ ուղարկված ձեզ բոլորիդ: Նրան է պատկանում երկինքների ու երկրի թագավորությունը: Չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության՝ բացի Ալլահից: Նա է կյանք պարգևողը և մահ տվողը: Ուստի՝ հավատացե՛ք Ալլահին և Նրա առաքյալին՝ անգրագետ մարգարեին, ով ինքն էլ հավատում է Ալլահին ու Նրա Խոսքերին: Հետևեցե՛ք նրան, գուցե ուղիղ ճանապարհի վրա լինեք»: [Ալ-Աղրոֆ:158] Այաթները այս իմաստով շատ են:

Հավատք Մագարեներին

Եվ այսպես էլ առաքյալների նկատմամբ պարտադիր է հավատալ թե՛ ընդհանրապես, թե՛ մասնավորապես: Մենք հավատում ենք, որ Ալլահը՝ Փառավորն ու Մեծարելին, ուղարկել է Իր ծառաների մոտ առաքյալներ՝ որպես բարի լուրերի հաղորդներ, նախազգուշացնողներ և ճշմարտության կոչ անողներ: Նա, ով հետևել է նրանց՝ գտել է երջանկություն այս և հանդերձյալ աշխարհում, իսկ ով մերժել է նրանց՝ արժանացել է դժբախտության և զղջման: Իսկ նրանցից վերջինը և ամենապատվավորը մեր մարգարեն է՝ Մուհամմադը՝ Աբդուլլահի որդին ﷺ, ինչպես ասում է Ալլահը՝ Մեծն ու Փառավորը:

﴿وَلَقَدْ بَعَثْنَا فِي كُلِّ أُمَّةٍ رَسُولًا أَنِ اعْبُدُوا اللَّهَ وَاجْتَنِبُوا الطَّاغُوتَ﴾

Մենք յուրաքանչյուր ազգի Առաքյալ ենք ուղարկել՝ այս պատգամով. «Երկրպագեցե՛ք միայն Ալլահին և հեռու մնացե՛ք կուռքերից ու կեղծ աստվածություններից»: [Նահլ:36] Ալլահն ասաց.

﴿رُسُلًا مُبَشِّرِينَ وَمُنْذِرِينَ لِئَلَّا يَكُونَ لِلنَّاسِ عَلَى اللَّهِ حُجَّةٌ بَعْدَ الرُّسُلِ﴾

«Առաքյալներ՝ որպես բարի լուրերի հաղորդներ ու նախազգուշացնողներ, որպեսզի մարդկանց համար չմնա արդարացու պատճառ Ալլահի առաջ՝ Առաքյալների գալուց հետո»: [Ան-Նիսա:165] Ալլահն ասաց.

﴿مَا كَانَ مُحَمَّدٌ أَبَا أَحَدٍ مِنْ رِجَالِكُمْ وَلَكِنْ رَسُولَ اللَّهِ وَخَاتَمَ النَّبِيِّينَ﴾

«Մուհամմադը ձեր տղամարդկանցից ոչ մեկի հայրը չէր, այլ նա Ալլահի Առաքյալն է և վերջին մարգարեն, ով կնքեց մարգարեության դուռը»: [Ալ-Ահզաբ:40] Եվ ում անունը Ալլահը հիշատակել է կամ ում անունը հաստատված է Մարգարե Մուհամմադից ﷺ՝ նրանց հավատքով ընդունում ենք՝ ճշգրիտ կերպով և ըստ անունների, ինչպես՝ Նոյը, Հուդը, Սալիհը, Աբրահամը և մյուսները: Նրանց և մեր մարգարեի վրա թող լինի ամենափառահեղ աղոթքն ու ամենազուտ ողջույնը:

Հավատքը Վերջին Օրին

Իսկ հավատքը Վերջին Օրին՝

դրա մեջ է մտնում հավատքը բոլոր այն բաներին, որոնց մասին հայտնել է Ալլահը և Նրա առաքյալը ﷺ, թե ինչ է տեղի ունենալու մահից հետո՝ ինչպես գերեզմանի փորձությունը, նրա տանջանքը և վայելքը, և այն ամենը, ինչ կլինի Հարության օրը՝ սարսափները և դժվարությունները, Սիրաթ կամուրջը, կշեռքը, հաշվետվությունը և հատուցումը, ինչպես նաև գրքերի բացումը մարդկանց առաջ, որոնցից ոմանք կստանան իրենց գիրքը աջ ձեռքով, իսկ մյուսները՝ ձախով կամ իրենց մեջքի հետևից: Այդ հավատքի մաս է կազմում նաև հավատալը այն Ավազանին, որ պատրաստված է մեր մարգարե Մուհամմադի ﷺ համար,

հավատալը Դրախտին ու Դժոխքին, հավատալը նրան, որ հավատացյալները կտեսնեն իրենց Տիրոջը՝ Ամենազոր Ալլահին, և որ Նա կխոսի նրանց հետ:

Նաև այն բոլոր ճշմարտությունները, որոնք ասվել են Սուրբ Կուռանում և հավաստի Սուննայում Ալլահի Առաքյալի ﷺ միջոցով:

Այս ամենին պարտադիր է ամբողջությամբ հավատալ և ընդունել՝ այն ձևով, ինչպես բացատրել է Ալլահն ու Նրա առաքյալը ﷺ :

Հավատքը նախասահմանության (կոդարի) նկատմամբ

Իսկ հավատքը նախասահմանության հանդեպ ներառում է չորս հիմնական սկզբունքների հավատք՝

Առաջինը՝ այն է, որ Ալլահը, փառավոր և մեծարելի, գիտի այն ամենը, ինչ եղել է և ինչ լինելու է: Նա գիտի Իր ծառաների բոլոր վիճակները, նրանց ապրուստները, կյանքի ժամկետները և բոլոր մնացած գործերը: Ալլահից ոչինչ թաքուն չէ՝ ո՛չ անցյալում, ո՛չ ապագայում: Ինչպես ասել է Փառավորը.

﴿أَنَّ اللَّهَ بِكُلِّ شَيْءٍ عَلِيمٌ﴾

«Ալլահը գիտի ամեն բան՝ առանց բացառության»: [Ալ-Բաքարա:231] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը

﴿لِتَعْلَمُوا أَنَّ اللَّهَ عَلَى كُلِّ شَيْءٍ قَدِيرٌ وَأَنَّ اللَّهَ قَدْ أَحَاطَ بِكُلِّ شَيْءٍ عِلْمًا﴾

«Որպեսզի դուք իմանաք, որ Ալլահը ամեն բանի վրա ունակ է, և որ Ալլահը Իր գիտությամբ ընդգրկել է ամեն բան»: [Աթ-Թալաք:12]

Եվ երկրորդ հարցը. Ալլահի կողմից այն ամենի գրի առնվելը, ինչ Նա նախասահմանել և վճռել է, ինչպես Ալլահն ասաց.

﴿قَدْ عَلِمْنَا مَا تَنْقُصُ الْأَرْضُ مِنْهُمْ وَعِنْدَنَا كِتَابٌ حَفِيظٌ ٤﴾

«Մենք լիովին գիտենք, թե ինչ է հողը խլում նրանցից, և Մեզ մոտ մի Գիրք կա՝ որն ամենը գրի է առնում ու պահպանում»: [Քաֆ:4] Ալլահն ասաց.

﴿وَكُلَّ شَيْءٍ أَحْصَيْنَاهُ فِي إِمَامٍ مُبِينٍ﴾

«Եվ Մենք ամեն ինչ հաշվել ու գրանցել ենք Պարզ բաց Գիրքում»: [Յա սին:12] Ալլահն ասաց.

﴿أَلَمْ تَعْلَمْ أَنَّ اللَّهَ يَعْلَمُ مَا فِي السَّمَاءِ وَالْأَرْضِ إِنَّ ذَلِكَ فِي كِتَابٍ إِنَّ ذَلِكَ عَلَى اللَّهِ يَسِيرٌ ٧٠﴾

«Չգիտե՞ս արդյոք, որ Ալլահը գիտի այն ամենը, ինչ կա երկնքում և երկրի վրա: Այս ամենը Գրքում է արձանագրված: Եվ դա՝ Ալլահի համար հեշտ է» [Հաջջ:70]

Երրորդ կետը՝ հավատալ, որ Ալլահի կամքը միշտ կատարվում է. ինչ Նա կամենա՝ անպայման կլինի, իսկ ինչ չցանկանա՝ երբեք չի լինի, ինչպես ասել է Ամենավեհը.

﴿إِنَّ اللَّهَ يَفْعَلُ مَا يَشَاءُ﴾

«Ալլահը կատարում է Իր կամքը՝ ինչպես կամենա»: [Ալ-հաջ: 18] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը

﴿إِنَّمَا أَمْرُهُ إِذَا أَرَادَ شَيْئًا أَنْ يَقُولَ لَهُ كُنْ فَيَكُونُ٨٢﴾

«Երբ Նա կամենում է որևէ բան, բավական է ասի՝ «Եղիր», և դա լինում է»: [Յա Սին:82] Փառավորն ասել է.

﴿وَمَا تَشَاءُونَ إِلَّا أَنْ يَشَاءَ اللَّهُ إِنَّ اللَّهَ كَانَ عَلِيمًا حَكِيمًا٣٠﴾

«Դուք չեք կարող կամենալ, եթե միայն Ալլահը չկամենա. Ալլահը Իրապես Գիտուն է և Իմաստուն»: [Ալ-Ինսան: 30]

Չորրորդը՝ այն է, որ Ալլահը՝ Նա Միակն է, Որը ստեղծել է բոլոր գոյավորների: Չկա այլ Ստեղծող բացի նրանից, և չկա այլ Տեր՝ բացի Նրանից, ինչպես ասել է Բարձրյալը.

﴿ٱللَّهُ خَٰلِقُ كُلِّ شَيۡءٖۖ وَهُوَ عَلَىٰ كُلِّ شَيۡءٖ وَكِيلٞ٦٢﴾

«Ալլահը ստեղծել է ամեն ինչ, և Նա է վստահված Խնամակալը ամեն բանի վրա»: [Ազ-զումար:62] Ալլահն ասաց.

﴿يَا أَيُّهَا النَّاسُ اذْكُرُوا نِعْمَتَ اللَّهِ عَلَيْكُمْ هَلْ مِنْ خَالِقٍ غَيْرُ اللَّهِ يَرْزُقُكُمْ مِنَ السَّمَاءِ وَالْأَرْضِ لَا إِلَهَ إِلَّا هُوَ فَأَنَّى تُؤْفَكُونَ٣﴾

«Մարդիկ, հիշեցե՛ք Ալլահի շնորհը ձեր վրա: Միթե՞ կա որևէ Ստեղծող Ալլահից բացի, ով կերակրում է ձեզ երկնքից և երկրից: Չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության, բացի Նրանից: Ուրեմն ի՞նչպես եք մոլորվում ճշմարտությունից»: [Ֆաթիր:3] Ուստի նախասահմանման նկատմամբ հավատքը ներառում է այս չորս հարցերի հավատալը՝ ըստ Սուննայի և Ջամաայի (համայնքի) հետևորդների, ի տարբերություն

նորարարական աղանդների կողմնակիցների, որոնք ժխտել են դրանցից մի մասը:

Հավատքը բաղկացած է խոսքից և գործից: Այն աճում է հնազանդության ժամանակ և նվազում՝ մեղքերի ժամանակ:

Ալլահի հանդեպ հավատքը ներառում է նաև այն, որ հավատքը խոսք է և գործ. այն ավելանում է՝ հնազանդության միջոցով և պակասում է՝ մեղքերի պատճառով: Եվ չի թույլատրվում որևէ մուսուլմանի մեղադրել անհավատությամբ՝ շնության, գողության, ռիբայի, ալկոհոլի խմելու, ծնողներին անհնազանդ լինելու կամ նման մեծ մեղքերի համար, եթե նա չի համարում դրանք թույլատրելի: Ինչպես ասում է Բարձրյալ Ալլահը.

﴿إِنَّ اللَّهَ لَا يَغْفِرُ أَنْ يُشْرَكَ بِهِ وَيَغْفِرُ مَا دُونَ ذَٰلِكَ لِمَنْ يَشَاءُ﴾

«Ալլահը չի ներում շիրքը՝ երբ Նրան համահավասար են դարձնում ուրիշի, իսկ դրանից բացի բոլոր մեղքերը ներում է՝ ում կամենա»: [Ան-Նիսա:48] Եվ քանի որ հավաստի փոխանցումներով հադիսներում հաստատված է Առաքյալի ﷺ կողմից, որ Ալլահը դուրս կբերի Դժոխքից նրան, ում սրտում կլինի նույնիսկ մանանեխի հատիկի չափ հավատք:

Աստծո համար սիրելը և Աստծո համար ատելությունը, հանուն Աստծո

եղբայրություն դրսևորելն ու հանուն Աստծո թշնամություն ցուցաբերելը

Աստծո հանդեպ հավատքի մաս է կազմում՝ սիրել հանուն Ալլահի ու ատել հանուն Ալլահի, դաշնակից լինել հանուն Ալլահի և թշնամանալ հանուն Ալլահի. հավատացյալը սիրում է մյուս հավատացյալներին ու եղբայրություն է ցուցաբերում նրանց նկատմամբ, իսկ անհավատներին ատում է և դառնում նրանց թշնամի: Այս համայնքի հավատացյալներից առավել արժանավոր են հանդիսանում Ալլահի Առաքյալի ﷺ ուղեկիցները»: Ահլ աս-Սուննան և Ալ-Ջամաան սիրում են նրանց, եղբայրություն են դրսևորում նրանց հետ և հավատում, որ նրանք մարդկանց մեջ լավագույններն են մարգարեներից հետո՝ ինչպես ասել է Մարգարեն ﷺ

«خير القرون قرني ثم الذين يلونهم ثم الذين يلونهم»

«Լավագույն սերունդը իմ սերունդն է, ապա նրանք, ովքեր հաջորդում են նրանց , ապա նրանք, ովքեր հաջորդում են նրանց»[1] Հադիս, որի ճշմարտացիությունը ընդունված է և վավեր է համարվում Բուխարիի ու Մուսլիմի մոտ: Նրանք հավատում են, որ լավագույնը նրանց մեջ

[1] Ալ-Բուխարի, «Վկայություններ» գիրք, №2509; Մուսլիմ, «Սահաբաների առաքինությունները», №2533; Աթ-Թիրմիզի, «Վաստակներ» գիրք, №3859; Իբն Մաջա, «Դատական դրույթներ» գիրք, №2362; Ահմադ իբն Համբալ, «Մուսնադ», հ.1, էջ 434:

Աբու Բաքր աս-Սիդդիկն է, ապա՝ Ումար ալ-Ֆարուքը, ապա՝ Ուսման Զու-ն-Նուրեյնը, ապա՝ Ալի ալ-Մուրտազան՝ Ալլահ թող գոհ լինի նրանցից բոլորից: Նրանցից հետո՝ մնացած տասը, ապա՝ մնացած սահաբիները՝ Ալլահ թող գոհ լինի բոլորից: Նրանք չեն խոսում այն տարաձայնությունների մասին, որոնք տեղի են ունեցել սահաբիների միջև, և հավատում են, որ նրանք այդ հարցերում ճիգ ու ջանք են գործադրել ճշմարտությունը գտնելու համար. ով ճշմարիտ է եղել՝ նրան երկու վարձ , իսկ ով սխալվել է՝ նրան մեկ վարձ : Նրանք սիրում են Ալլահի Առաքյալի ﷺ ընտանիքի հավատացող անդամներին, ու բարեկամաբար են նրանց նկատմամբ, Սիրով ու հարգանքով են վերաբերվում Առաքյալի ﷺ կանանց՝ մուսուլմանների մայրերին, ու լավ կարծիք են հայտնում նրանց բոլորի մասին՝ թող Ալլահ գոհ լինի նրանցից: Նրանք խզում են կապը ռաֆիդիների ճանապարհի հետ, ովքեր ատում են Առաքյալի ﷺ ուղեկիցներին, նրանց հայհոյում ու չափազանց բարձրացնում են Առաքյալի ﷺ ընտանիքը՝ նրանց վեր դասելով այն աստիճանից, որը Ալլահ է սահմանել: Նմանապես, նրանք հեռու են նաև նասիբիների ուղուց, ովքեր ցավ են պատճառում Առաքյալի ﷺ ընտանիքին՝ խոսքով կամ արարքով:

Այստեղ հիշեցված բոլոր դրույթները մտնում են այն ճշմարիտ հավատամքի մեջ, որով Ալլահը

ուղարկեց Իր Առաքյալին՝ Մուհամմեդին ﷺ: Դա է փրկված խմբի՝ Սուննայի ու համայնքի հետևորդների (Ահլուս Սուննա վալ Ջամաա) հավատամքը, որի մասին Առաքյալը ﷺ ասաց:

«لا تزال طائفة من أمتي على الحق منصورة لا يضرهم من خذلهم حتى يأتي أمر الله سبحانه»

«Իմ ումմայից մի խումբ մշտապես հաստատուն կլինի ճշմարտության վրա՝ հաղթանակած, և նրանց չի վնասի նա, ով նրանց լքի, մինչև Ալլահի հրամանի գալը»:[1] ԵՒ ասաց նա (նրա վրա թող լինի Ալլահի խաղաղությունն ու օրհնությունը).

«افترقت اليهود على إحدى وسبعين فرقة، وافترقت النصارى على اثنتين وسبعين فرقة، وستفترق هذه الأمة على ثلاث وسبعين فرقة كلها في النار إلا واحدة فقال الصحابة: من هي يا رسول الله؟ قال: من كان على مثل ما أنا عليه وأصحابي»

«Հրեաները բաժանվեցին 71 խմբի, քրիստոնյաները՝ 72-ի, իսկ այս ումման բաժանվելու է 73 խմբի: Բոլորն էլ դժոխքում կլինեն, բացի մեկից»: Աշակերտները հարցրին. «Ո՞վ են նրանք, ո՛վ Ալլահի Առաքյալ»: Նա պատասխանեց. «Նրանք, ովքեր հետևում են ինձ ու իմ ուղեկիցներին»:[2] Դա այն հավատամքն է, որին մարդ պետք է կառչի, ապրի դրա համաձայն և զգուշանա նրանից շեղվող ամեն ինչից:

---

[1] Մուսլիմ, «Իմամություն» գիրք, №1920; Աթ-Թիրմիզի, «Փորձություններ» գիրք, №2229; Աբու Դաուդ, «Փորձություններ և աղետներ» գիրք, №4252; Իբն Մաջա, «Փորձություններ» գիրք, №3952; Ահմադ իբն Համբալ, «Մուսնադ», h.5, էջ 279:

[2] Իբն Մաջա, «Փորձություններ» գիրք, №3992:

Հիշատակումը նրանց, ովքեր շեղվել են այս հավատամքից և ընթացել են նրա հակառակ ճանապարհով:

Նրանց տեսակները:

Ինչ վերաբերում է նրանց, ովքեր շեղվել են այս դավանանքից և ընթացել հակառակ ուղղով, ապա նրանք բազմաթիվ տեսակներ ունեն. դրանցից են՝ կուռքերին ու արձաններին, հրեշտակներին, սրբերին, ջիններին, ծառերին, քարերին և այլ արարածների երկրպագողները: Նման մարդիկ չեն արձագանքել առաքյալների հրավերին, այլ հակառակվել և ընդդիմացել են նրանց՝ ինչպես արեցին քուրայշցիներն ու արաբների տարբեր խմբերը մեր Մուհամմադ ﷺ մարգարեի նկատմամբ: Նրանք իրենց պաշտամունքի առարկաներից խնդրում էին կարիքների լուծում, հիվանդների բուժում, հաղթանակ թշնամիների վրա, նրանց համար կատարում էին զոհաբերություններ և ուխտեր: Իսկ երբ Առաքյալը ﷺ մերժեց այդ արարքները և հրամայեց մաքուր երկրպագություն միայն Ալլահին, նրանք զարմացան և մերժեցին՝ ասելով.

﴿أَجَعَلَ الْآلِهَةَ إِلَهًا وَاحِدًا إِنَّ هَذَا لَشَيْءٌ عُجَابٌ ٥﴾

«Մի՞թե նա բոլոր աստվածներին դարձրեց մեկ Աստված. անկասկած, սա զարմանալի մի բան է» (5): [Սոդ:5] Մինչև վերջ Մուհամմադ ﷺ մարգարեն կոչ էր անում նրանց դեպի Ալլահը, զգուշացնում էր շիրկից

(բազմաստվածությունից) և պարզաբանում էր իր ուղերձի էությունը, մինչև որ Ալլահը նրանցից ում կամեցավ՝ ուղղեց դեպի ճշմարիտ ուղի: Այնուհետև նրանք խմբերով ընդունեցին Ալլահի կրոնը, և այն հաղթեց մնացած բոլոր կրոններին՝ շնորհիվ Առաքյալի ﷺ, նրա ուղեկիցների(թող Աստված գոհ լինի նրանցից) և նրանց բարությամբ հետևածների շարունակական հրավերի ու երկարատև ջիհադի: Բայց հետագայում վիճակները փոխվեցին, և տգիտությունը ծածկեց մարդկանց մեծ մասին, այնպես որ, մեծամասնությունը կրկին վերադարձավ ջահիլիայի կրոնին՝ մարգարեներին ու սրբերին չափից դուրս մեծարելով, նրանց կանչելով, նրանցից օգնություն խնդրելով և այլ շիրկի տեսակներ գործելով: Նրանք չհասկացան «Չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության, բացի Ալլահից» խոսքի իմաստը այնպես, ինչպես այն հասկացել էին արաբ անհավատները: Ալլահն է՝ ումից օգնություն ենք խնդրում:

Այս շիրքը (բազմաստվածությունը) մարդկանց մեջ շարունակ տարածվել է մինչև մեր օրերը՝ տգիտության տարածվածության և մարգարեության դարաշրջանից հեռու լինելու պատճառով:

Նրանցից հետագա ժամանակներում եղածների կասկածը այն է, ինչ առաջինների

կասկածը, և այստեղ հիշատակվում են որոշ անհավատական համոզմունքներ:

Այս հետագա ժամանակների մարդկանց կասկածը նույնն է, ինչ նախնականների կասկածը: Նրանց խոսքն էր. «Սրանք մեր միջնորդներն են Ալլահի մոտ, մենք նրանց չենք երկրպագում, այլ միայն որպեսզի մեզ մոտեցնեն Ալլահին»: Բայց Ալլահը այս կասկածը մերժեց և ցույց տվեց, որ ով երկրպագի որևէ մեկին Իրենից բացի, անկախ թե ով է այդ անձը, նա շիրք է գործել և դարձել անհավատ, ինչպես որ ասում է Բարձրյալը:

﴿وَيَعْبُدُونَ مِنْ دُونِ اللَّهِ مَا لَا يَضُرُّهُمْ وَلَا يَنْفَعُهُمْ وَيَقُولُونَ هَؤُلَاءِ شُفَعَاؤُنَا عِنْدَ اللَّهِ﴾

«Նրանք Ալլահից բացի երկրպագում են նրանց, ովքեր չեն կարող վնասել և չեն կարող օգուտ բերել, և ասում են՝ սրանք մեր միջնորդներն են Ալլահի մոտ»: [Յունուս:18] Ալլահը պատասխանեց նրանց, Փառք լինի Նրան, Իր խոսքերով:

﴿قُلْ أَتُنَبِّئُونَ اللَّهَ بِمَا لَا يَعْلَمُ فِي السَّمَاوَاتِ وَلَا فِي الْأَرْضِ سُبْحَانَهُ وَتَعَالَى عَمَّا يُشْرِكُونَ﴾

«Ասա. Մի՞թե դուք ուզում եք Ալլահին տեղեկացնել ինչ-որ բանի մասին, որը Նրան հայտնի չէ ոչ երկինքներում, ոչ էլ երկրի վրա: Փառք և բարձրություն Նրան այն ամենից վեր, ինչով նրանք Նրա հանդեպ շիրք են գործում»: [Յունուս:18] Այս այաթում Ալլահը՝ Փառք Նրան,

ցույց տվեց, որ Նրանից բացի մարգարեներին, աուլիյաներին (սրբերին) կամ ուրիշներին երկրպագելը մեծ շիրք է, թեկուզ մարդիկ այն ուրիշ կերպ անվանեն: Եվ ասաց Ալլահը.

﴿وَالَّذِينَ اتَّخَذُوا مِنْ دُونِهِ أَوْلِيَاءَ مَا نَعْبُدُهُمْ إِلَّا لِيُقَرِّبُونَا إِلَى اللَّهِ زُلْفَى﴾

«Եվ նրանք, ովքեր Նրա փոխարեն իրենց համար Սրբեր վերցրեցին, ասում են. Մենք նրանց չենք երկրպագում, եթե ոչ միայն այն բանի համար, որպեսզի նրանք մեզ առավել մոտեցնեն Ալլահին»: [Զումար:3] Ալլահը նրանց պատասխանեց՝ Մեծ Փառք Նրան, Իր ասածով.

﴿إِنَّ اللَّهَ يَحْكُمُ بَيْنَهُمْ فِي مَا هُمْ فِيهِ يَخْتَلِفُونَ إِنَّ اللَّهَ لَا يَهْدِي مَنْ هُوَ كَاذِبٌ كَفَّارٌ﴾

«Ալլահը կդատի նրանց միջև այն հարցերում, որոնցում նրանք անհամաձայն են: Ալլահը չի ուղեկցում նրան, ով ստախոս է և անշնորհակալ անհավատ»: [Զումար:3] Այսպիսով Ալլահը՝ Փառք Նրան, պարզեց, որ Նրանից բացի ուրիշներին դիմել աղոթքով, վախով, հույսով և նման բաներով անհավատություն է: Նա նաև հերքեց նրանց խոսքը, թե իբր իրենց կուռքերը մոտեցնում են նրանց Ալլահին:

Եվ ճշմարիտ հավատամքին հակասող և առաքյալների (օրհնություն և խաղաղություն նրանց) բերածին հակառակվող անհավատության հավատալիքներից է այն, ինչին հավատում են այս դարաշրջանի աթեիստները՝ Մարքսի, Լենինի և աթեիզմի ու անհավատության մյուս քարոզիչների

հետևորդները, անկախ նրանից՝ դա անվանում են սոցիալիզմ, կոմունիզմ, բաասիզմ, թե այլ անուններով: Քանզի այս աթեիստների հիմնական սկզբունքներից է, որ Աստված չկա, և կյանքը նյութ է: Նրանց հիմնական սկզբունքներից են հարության, Դրախտի և Դժոխքի ժխտումը, ինչպես նաև բոլոր կրոնների նկատմամբ անհավատությունը: Ով ուսումնասիրի նրանց գրքերը և ծանոթանա նրանց ուսմունքին, կհամոզվի դրանում: Անկասկած, այս ուսմունքը հակասում է բոլոր երկնային կրոններին և իր հետևորդներին տանում է դեպի ամենավատ հետևանքները թե՛ այս կյանքում, և թե՛ հավիտենության մեջ:

Ճշմարտությանը հակասող հավատալիքներից է որոշ բատինիտների և սուֆիների այն համոզմունքը, թե իբր «Աուլիյա» կոչվածներից ոմանք Ալլահի հետ կիսում են տիեզերքի կառավարումը և տնօրինում են աշխարհի գործերը, և նրանց անվանում են «Ակտաբ», «Ավթադ», «Աղվաս» և այլ անուններ, որոնք հորինել են իրենց աստվածների համար: Եվ սա Տիրակալության մեջ բազմաստվածության ամենատգեղ ձևերից է, և դա ավելի վատ է, քան նախաիսլամական արաբների բազմաստվածությունը, քանի որ արաբ անհավատները բազմաստվածություն չէին գործում Տիրակալության մեջ, այլ նրանք բազմաստվածություն էին գործում

երկրպագության մեջ: Նրանց բազմաստվածությունը բարեկեցության ժամանակ էր, իսկ դժվարության ժամանակ նրանք իրենց երկրպագությունը անկեղծորեն նվիրում էին Աստծուն, ինչպես ասել է Ամենաբարձրյալ Ալլահը.

﴿فَإِذَا رَكِبُوا فِي الْفُلْكِ دَعَوُا اللَّهَ مُخْلِصِينَ لَهُ الدِّينَ فَلَمَّا نَجَّاهُمْ إِلَى الْبَرِّ إِذَا هُمْ يُشْرِكُونَ٦٥﴾

«Երբ նրանք նավ են նստում, աղոթում են Ալլահին՝ մաքուր հավատքով: Իսկ երբ Նա փրկում է նրանց և հասցնում ցամաք, ահա նրանք Նրան համահավասար են դնում»: [Ալ-Անքաբութ:65] Իսկ Տերությունը նրանք խոստովանում էին, որ այն միայն Նրանն է, ինչպես ասել է Ամենաբարձրյալը.

﴿وَلَئِنْ سَأَلْتَهُمْ مَنْ خَلَقَهُمْ لَيَقُولُنَّ اللَّهُ﴾

Եվ եթե նրանց հարցնես, թե ով է նրանց ստեղծել, նրանք անպայման կասեն՝ Ալլահը: [Ազ-Զուխրուֆ:87]: Ալլահն ասաց.

﴿قُلْ مَنْ يَرْزُقُكُمْ مِنَ السَّمَاءِ وَالْأَرْضِ أَمَّنْ يَمْلِكُ السَّمْعَ وَالْأَبْصَارَ وَمَنْ يُخْرِجُ الْحَيَّ مِنَ الْمَيِّتِ وَيُخْرِجُ الْمَيِّتَ مِنَ الْحَيِّ وَمَنْ يُدَبِّرُ الْأَمْرَ فَسَيَقُولُونَ اللَّهُ فَقُلْ أَفَلَا تَتَّقُونَ٣١﴾

Ասա. «Ո՞վ է ձեզ ապրուստ տալիս երկնքից ու երկրից, կամ ո՞վ է տիրապետում լսողությանն ու տեսողությանը: Ո՞վ է կենդանին հանում մեռածից և մեռածը՝ կենդանուց, և ո՞վ է կառավարում ամեն ինչ»: Նրանք կասեն՝ «Ալլահը»: Ապա ասա. «Մի՞թե չեք դառնա

աստվածավախ»: [Յունուս:31]: Եվ այս իմաստով այաթները բազմաթիվ են:

Այն, ինչով հետագա բազմաստվածները գերազանցեցին նախնկիններին:

Իսկ ինչ վերաբերում է ուշ շրջանի բազմաստվածներին, ապա նրանք երկու առումով գերազանցեցին առաջիններին: Առաջինը՝ նրանցից ոմանց բազմաստվածությունը Տիրակալության մեջ, և երկրորդը՝ նրանց բազմաստվածությունը թե՛ բարօրության, թե՛ դժվարության ժամանակ, ինչպես գիտի նա, ով շփվել է նրանց հետ և քննել նրանց վիճակը, և տեսել է, թե ինչ են անում Եգիպտոսում Հուսեյնի, Բադավիի և այլոց գերեզմանների մոտ, Ադենում՝ ալ-Այդարուսի գերեզմանի մոտ, Եմենում՝ ալ-Հադիի, Շամում՝ Իբն Արաբիի, Իրաքում՝ Շեյխ Աբդուլ-Քադիր ալ-Ջիլանիի և այլ հայտնի գերեզմանների մոտ, որոնց հարցում հասարակ ժողովուրդը ծայրահեղությունների մեջ է ընկել և դրանց է ուղղել Ամենակարող և Մեծագույն Աստծո իրավունքներից շատերը: Եվ քչերն են, որ դատապարտում են նրանց դրա համար և բացատրում նրանց միաստվածության իրականությունը, որով Ալլահը ուղարկեց Իր մարգարեին՝ թող Աստծո օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա, և նրանից առաջ եղած մարգարեներին՝ թող նրանց վրա լինի օրհնություն և խաղաղություն: Իսկապես, մենք

Աստծուն ենք պատկանում և Նրան ենք վերադառնալու: Եվ մենք խնդրում ենք Նրան՝ Բարձրյալին, որ նրանց վերադարձնի ողջախոհության, նրանց մեջ շատացնի ճշմարիտ ուղղու քարոզիչներին և աջակցի մուսուլմանների առաջնորդներին ու գիտնականներին՝ պայքարելու այս բացմաստվածության դեմ, վերացնելու այն և դրա բոլոր միջոցները: Իրավամբ, Նա Ամենալսող է և Մոտ:

Անունների և Հատկանիշների բաժնում ճիշտ հավատամքին հակասող հավատալիքներից են նորարարների՝ Ջահմիականների, Մութազիլականների և նրանց ուղին բռնածների հավատալիքները, որոնք ժխտում են Ալլահի՝ Ամենակարողի և Փառապանծի, հատկանիշները, Նրան՝ Սուրբին, զրկում են կատարելության հատկանիշներից և Նրան վերագրում են չգոյերի, անշունչ առարկաների և անհնարինների հատկանիշներ: Ալլահը անհամեմատ բարձր է նրանց ասածներից: Սրա մեջ են մտնում նաև նրանք, ովքեր ժխտեցին որոշ հատկանիշներ և հաստատեցին մյուսները, ինչպես օրինակ՝ աշարիները: Քանզի այն հատկանիշների դեպքում, որոնք նրանք հաստատեցին, նրանց համար պարտադիր է դառնում հենց այն, ինչից խուսափում էին՝ ժխտելով մյուս հատկանիշները և այլաբանորեն մեկնաբանելով դրանց ապացույցները, ինչի

հետևանքով էլ հակասեցին և՛ սուրբգրային, և՛ բանականության ապացույցներին՝ ընկնելով ակնհայտ հակասության մեջ: Ինչ վերաբերում է Սուննայի հետևորդների մեթոդներին, ապա նրանք հաստատեցին Սուրբ Ալլահի համար այն Անուններն ու Հատկանիշները, որոնք Նա Ինքը հաստատել է Իր համար կամ որոնք հաստատել է Նրա մարգարե Մուհամմադը ﷺ՝ դրանք ընդունելով իրենց կատարելության մեջ: Նրանք Նրան զերծ հռչակեցին Իր արարածներին նմանվելուց՝ միաժամանակ զերծ մնալով Նրա հատկանիշները ժխտելու արատից: Ուստի նրանք առաջնորդվեցին բոլոր ապացույցներով՝ առանց աղավաղելու կամ ժխտելու, և զերծ մնացին այն հակասությունից, որի մեջ ընկան մյուսները, ինչպես նախկինում բացատրվել է: Սա է փրկության և երջանկության ճանապարհը այս և հանդերձյալ աշխարհում: Սա է ճշմարիտ Ուղղին, որով ընթացել են այս ումմայի նախնիներն ու առաջնորդները: Եվ այս ումմայի վերջինները չեն ուղղվի, բացի նրանով, ինչով ուղղվել են առաջինները, այն է՝ հետևել Գրքին ու Սուննային և հրաժարվել այն ամենից, ինչը հակասում է դրանց:

Միայն Ալլահին երկրպագելու պարտավորությունը և Ալլահի

Թշնամիների նկատմամբ հաղթանակի պատճառների բացատրությունը

Անշուշտ, յուրաքանչյուր պատասխանատուի համար ամենակարևոր պարտականությունն ու մեծագույն պարտավորությունն է երկրպագել իր Տիրոջը՝ Փառավորին, երկինքների ու երկրի Տիրոջը և Գահի Տիրոջը, Ով Իր Պատվական Գրքում ասում է.

﴿إِنَّ رَبَّكُمُ اللَّهُ الَّذِي خَلَقَ السَّمَاوَاتِ وَالْأَرْضَ فِي سِتَّةِ أَيَّامٍ ثُمَّ اسْتَوَى عَلَى الْعَرْشِ يُغْشِي اللَّيْلَ النَّهَارَ يَطْلُبُهُ حَثِيثًا وَالشَّمْسَ وَالْقَمَرَ وَالنُّجُومَ مُسَخَّرَاتٍ بِأَمْرِهِ أَلَا لَهُ الْخَلْقُ وَالْأَمْرُ تَبَارَكَ اللَّهُ رَبُّ الْعَالَمِينَ٥٤﴾

«Անշուշտ, ձեր Տերը Ալլահն է՝ Նա, Ով ստեղծեց երկինքները և երկիրը վեց օրվա ընթացքում, ապա բարձրացավ Իր Գահի վրա: Նա գիշերով պատում է ցերեկը, որը շտապ հետևում է նրան: Արևը, լուսինը և աստղերը ենթարկվում են Նրա հրամանին: Ահա՛, Նրան է պատկանում և՛ արարածները, և՛ հրամանը: Օրհնյալ է Ալլահը՝ բոլոր աշխարհների Տերը »: [Ալ-Ա'րաֆ:54]: Եվ Ալլահը Իր գրքի մեկ այլ հատվածում հայտնել է, որ Նա արարել է ջիններին և մարդկանց Իրեն երկրպագելու համար: Եվ Ալլահն ասաց.

﴿وَمَا خَلَقْتُ الْجِنَّ وَالْإِنْسَ إِلَّا لِيَعْبُدُونِ٥٦﴾

«Ես ստեղծել եմ ջիններին ու մարդկանց միայն մեկ նպատակի համար՝ որպեսզի նրանք երկրպագեն Ինձ»: [Զարիաթ:56] Եվ այս երկրպագությունը, որի համար Ալլահն արարել է

մարդկանց և ջիններին, կայանում է Նրա միակության հաստատման մեջ՝ պաշտամունքի բոլոր տեսակներով, ինչպիսիք են նամազը, ծոմապահությունը, զաքաթը, հաջը, խոնարհումը, երկրպագությունը (ծնկի իջնելը), Կաաբայի շուրջ շրջանցումը, զոհաբերությունը, ուխտը, վախն ու հույսը, փրկություն հայցելը, աջակցություն խնդրելը և ապաստան փնտրելը, ինչպես նաև աղոթքի մյուս բոլոր տեսակները: Դրա մեջ է մտնում նաև հնազանդությունը Նրան՝ Փառավորին, Նրա բոլոր հրամաններին հետևելը և արգելքներից հրաժարվելը՝ համաձայն այն ամենի, ինչին հղում է արվում Նրա Ազնիվ Գրքում և Նրա վստահելի Մարգարեի սուննայում, ում վրա թող լինի իր Տիրոջ լավագույն օրհնությունն ու խաղաղությունը: Եվ Ալլահը՝ Փառավորը, բոլոր մարդկանց և ջիններին հրամայել է կատարել այն երկրպագությունը, որի համար նրանք ստեղծվել են: Նա ուղարկել է բոլոր մարգարեներին և իջեցրել է գրքերը՝ բացատրելու և մանրամասնելու այս երկրպագությունը, դրան կոչ անելու և հրամայելու, որ այն անկեղծորեն նվիրվի միայն Ալլահին, ինչպես ասել է Ամենաբարձրյալը.

﴿يَا أَيُّهَا النَّاسُ اعْبُدُوا رَبَّكُمُ الَّذِي خَلَقَكُمْ وَالَّذِينَ مِنْ قَبْلِكُمْ لَعَلَّكُمْ تَتَّقُونَ ٢١﴾

«Մարդիկ, երկրպագեցե՛ք ձեր Տիրոջը՝ Նրան, Ով ձեզ ստեղծեց, ինչպես նաեւ նրանց, ովքեր եղել են ձեզնից առաջ, որպեսզի դուք

բարեպաշտ լինեք ու խուսափեք մեղքերից»: [Բաքարա:21] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը

﴿وَقَضَى رَبُّكَ أَلَّا تَعْبُدُوا إِلَّا إِيَّاهُ وَبِالْوَالِدَيْنِ إِحْسَانًا﴾

«Քո Տերը վճռել է, որ միայն Նրան երկրպագեք և սիրալիր լինեք ծնողների նկատմամբ»: [Իսրա:23] Այս այաթում «կադա»-ի իմաստն է՝ հրամայեց և պատվիրեց: Ալլահն ասաց.

﴿وَمَا أُمِرُوا إِلَّا لِيَعْبُدُوا اللَّهَ مُخْلِصِينَ لَهُ الدِّينَ حُنَفَاءَ وَيُقِيمُوا الصَّلَاةَ وَيُؤْتُوا الزَّكَاةَ ۚ وَذَٰلِكَ دِينُ الْقَيِّمَةِ ۝٥﴾

«Նրանց պատվիրվել է միայն երկրպագել Ալլահին՝ մաքուր հավատքով, լինելով ուղղահավատ, կատարել նամազը և տալ զաքաթը: Եվ դա է ճշմարիտ կրոնը»: [Ալ-Բայինա:5] Եվ այս իմաստով այաթները Ալլահի գրքում բազմաթիվ են, և Ալլահն ասաց.

﴿وَمَا آتَاكُمُ الرَّسُولُ فَخُذُوهُ وَمَا نَهَاكُمْ عَنْهُ فَانْتَهُوا ۚ وَاتَّقُوا اللَّهَ ۖ إِنَّ اللَّهَ شَدِيدُ الْعِقَابِ﴾

«Ինչ որ Մարգարեն ձեզ տալիս է, վերցրե՛ք, և ինչից որ արգելում է, հեռու մնացեք: Եվ զգույշ եղեք Ալլահից (Աստծուց): Իրոք, Ալլահը (Աստվածը) խստապատիժ է»: [Ալ-Հաշր:7]: Փառավորն ասել է.

﴿يَا أَيُّهَا الَّذِينَ آمَنُوا أَطِيعُوا اللَّهَ وَأَطِيعُوا الرَّسُولَ وَأُولِي الْأَمْرِ مِنْكُمْ ۖ فَإِنْ تَنَازَعْتُمْ فِي شَيْءٍ فَرُدُّوهُ إِلَى اللَّهِ وَالرَّسُولِ إِنْ كُنْتُمْ تُؤْمِنُونَ بِاللَّهِ وَالْيَوْمِ الْآخِرِ ۚ ذَٰلِكَ خَيْرٌ وَأَحْسَنُ تَأْوِيلًا ۝٥٩﴾

«Ո՛վ դուք, ովքեր հավատք եք ընծայել, հնազանդվե՛ք Ալլահին, հնազանդվե՛ք

Մարգարեին և ձեզանից իշխանություն ունեցողներին: Եթե որևէ հարցում տարաձայնեք, ապա դիմե՛ք Ալլահին և Մարգարեին, եթե իսկապես հավատում եք Ալլահին և Վերջին օրվան: Դա ավելի լավ է և ունի լավագույն ավարտը»: [Ան-Նիսա:59]: Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը

﴿مَنْ يُطِعِ الرَّسُولَ فَقَدْ أَطَاعَ اللَّهَ﴾

«Ով հնազանդվում է Մարգարեին, հնազանդվել է Ալլահին»: [Ան-Նիսա: 80]:

Փառավորն ասել է.

﴿وَلَقَدْ بَعَثْنَا فِي كُلِّ أُمَّةٍ رَسُولًا أَنِ اعْبُدُوا اللَّهَ وَاجْتَنِبُوا الطَّاغُوتَ﴾

«Մենք յուրաքանչյուր համայնքի առաքյալ ենք ուղարկել՝ այս պատգամով. Երկրպագեցե՛ք միայն Ալլահին և հեռու մնացե՛ք կուռքերից ու կեղծ աստվածություններից»: [Ան-Նահլ:36], Փառավորն ասել է.

﴿وَمَا أَرْسَلْنَا مِنْ قَبْلِكَ مِنْ رَسُولٍ إِلَّا نُوحِي إِلَيْهِ أَنَّهُ لَا إِلَهَ إِلَّا أَنَا فَاعْبُدُونِ٢٥﴾

«Քեզնից առաջ մենք որևէ Առաքյալ չենք ուղարկել, ում չհայտնեինք այս պատգամը՝ չկա ուրիշ աստված՝ բացի Ինձանից. Ուրեմն երկրպագեցե՛ք Ինձ»: [Ալ-Անբիյա:25] Ալլահն ասաց.

﴿الر كِتَابٌ أُحْكِمَتْ آيَاتُهُ ثُمَّ فُصِّلَتْ مِنْ لَدُنْ حَكِيمٍ خَبِيرٍ ١ أَلَّا تَعْبُدُوا إِلَّا اللَّهَ إِنَّنِي لَكُمْ مِنْهُ نَذِيرٌ وَبَشِيرٌ ٢﴾

«Ալիֆ-Լամ-Ռա:

Սա է Գիրքը, որի այաթները հաստատուն և իմաստությամբ ամրագրված են, ապա մանրամասն բացատրված՝

Նրա կողմից, Ով Իմաստուն է և Ամենագետ»:

«Որպեսզի չերկրպագեք ոչ ոքի՝ բացի Ալլահից:

Քանզի ես ձեզ համար Նրանից եմ ուղարկված՝ որպես զգուշացնող և բարի ավետիս բերող»: [Հուդ:1-2]

Այս հստակ այաթները և Ալլահի Գրքի համանման հատվածները բոլորը վկայում են, որ երկրպագությունը պետք է մաքրամաքուր կերպով նվիրվի միայն Ալլահին, և որ դա է կրոնի հիմքն ու հավատքի հիմնասյունը: Դրանք նաև վկայում են, որ սա է ջիների և մարդկանց արարման, առաքյալների ուղարկման և սուրբ գրքերի իջեցման իմաստությունը: Հետևաբար, բոլոր պարտավորյալների պարտականությունն է ուշադրություն դարձնել այս հարցին, խորամուխ լինել դրա մեջ և զգուշանալ այն ամենից, ինչի մեջ հայտնվել են իրենց իսլամին դավանողներից շատերը: Դրանք են՝ մարգարեներին և բարեպաշտներին չափից դուրս մեծարելը, նրանց գերեզմանների վրա շինություններ, մզկիթներ ու գմբեթներ կառուցելը, նրանցից խնդրելը, օգնություն հայցելը և նրանց ապավինելը, ինչպես նաև նրանցից խնդրել կարիքների բավարարում, նեղություններից ազատում, հիվանդների

բուժում, հաղթանակ թշնամիների դեմ, և մեծագույն շիրքի (Ալլահին համահավասար ընդունելու) այլ տեսակները: Հավաստիորեն փոխանցվել է Ալլահի առաքյալից (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա) այն, ինչը համապատասխանում է Ամենակարող և Մեծագույն Ալլահի գրքի նշածին: Երկու «Սահիհ»-ներում Մուաազից (Ալլահի գոհությունը նրան) փոխանցվում է, որ Մարգարեն (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա) ասաց նրան.

«أتدري ما حق الله على العباد وحق العباد على الله؟ فقال معاذ: قلت الله ورسوله أعلم، فقال النبي –صلى الله عليه وسلم- حق الله على العباد أن يعبدوه ولا يشركوا به شيئا، وحق العباد على الله أن لا يعذب من لا يشرك به شيئا» الحديث.

«Գիտե՞ս, թե որն է Ալլահի իրավունքը ծառաների վրա և որն է ծառաների իրավունքը Ալլահի վրա»: Մուազն ասաց. «Ալլահն ու Նրա Առաքյալն ավելի լավ գիտեն»: Մարգարեն ﷺ ասաց. «Ալլահի իրավունքը ծառաների վրա այն է, որ Նրան երկրպագեն և Նրան համահավասար չդնեն, իսկ ծառաների իրավունքը Ալլահի վրա այն է, որ Նա չպատժի նրան, ով Իրեն համահավասար չի դնում»[1] Հադիս: Եվ Սահիհ ալ-Բուխարիում Իբն Մասուդից (թող Ալլահը գոհ

[1] Բուխարի, «Թույլտվություն հարցելը» (5912), Մուսլիմ, «Հավատք» (30), Ալ-Թիրմիզի, «Հավատք» (2643), Իբն Մաջահ, «Ասկետիզմ» (4296), Ահմադ (5/238):

լինի նրանից) հաղորդվում է, որ Մարգարեն ﷺ ասաց.

«من مات وهو يدعو لله ندا دخل النار»

«Ով որ մահանա՝ Ալլահին հավասար մեկին աղոթելով, կմտնի կրակը»[1] Մուսլիմը իր «Սահիհ»-ում հաղորդել է Ջաբիրից (թող Ալլահը գոհ լինի նրանից), որ Մարգարեն (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա) ասաց.

«من لقي الله لا يشرك به شيئا دخل الجنة ومن لقيه يشرك به شيئا دخل النار»

«Ով հանդիպի Ալլահին՝ առանց Նրան որևէ բան հավասարեցնելու, կմտնի Դրախտ, իսկ ով հանդիպի Նրան՝ որևէ բան հավասարեցնելով, կմտնի Դժոխք»:[2] Այս թեմայով բազմաթիվ հադիսներ կան, և այս հարցը ամենակարևորներից ու մեծագույններից է: Ալլահը ուղարկեց Իր մարգարեին՝ Մուհամմադին ﷺ, որպեսզի նա կոչ անի միաստվածության և արգելի բազմաստվածությունը: Նա (Ալլահի խաղաղությունն ու օրհնությունը նրան) լիակատար կերպով հասցրեց այն ուղերձը, որով Ալլահն իրեն ուղարկել էր: Նա դաժան հալածանքների ենթարկվեց Ալլահի ճանապարհին, սակայն համբերեց: Նրա հետ

---

[1] Բուխարի, «Կուռանի(Ղուրանի) մեկնաբանություն», 4227, Մուսլիմ, «Հավատք», 92, Ահմադ,(1/374):

[2] Ալ Բուխարի, «Գիտելիք»(129), Մուսլիմ, (32), Ահմադ, (3/157):

համբերեցին նաև իր սահաբիները (թող Ալլահը գոհ լինի նրանցից)՝ առաքելությունը տարածելու գործում, մինչև որ Ալլահը Արաբական թերակղզուց հեռացրեց բոլոր կուռքերն ու սրբապատկերները: Եվ մարդիկ ամբոխներով ընդունեցին Ալլահի կրոնը: Ջարդվեցին Կաաբայի շուրջը և ներսում գտնվող կուռքերը, ավերվեցին ալ-Լաթը, ալ-Ուզզան և Մանաթը, ինչպես նաև արաբական ցեղերի բոլոր կուռքերն ու սրբապատկերները: Եվ բարձրացավ Ալլահի խոսքը, և իսլամը գերիշխեց Արաբական թերակղզում: Այնուհետև մուսուլմանները քարոզի և ջիհադի միջոցով իրենց կոչն ուղղեցին թերակղզուց դուրս: Ալլահը նրանց միջոցով ուղղեց իր ծառաներից նրանց, ում վիճակված էր երջանկություն, և տարածեց ճշմարտությունն ու արդարությունը աշխարհի մեծ մասում: Դրանով նրանք դարձան ուղղության և ճշմարտության առաջնորդներ, արդարության ու բարեփոխումների քարոզիչներ: Նրանց ճանապարհով գնացին բարեպաշտ հետևորդները (թաբիիները) և նրանց հետևորդները՝ ուղղության առաջնորդներն ու ճշմարտության քարոզիչները, որոնք տարածում էին Ալլահի կրոնը, մարդկանց կոչ էին անում դեպի Ալլահի միաստվածությունը և ջիհադ էին անում Ալլահի ճանապարհին իրենց կյանքով ու ունեցվածքով: Ուստի Ալլահը զորացրեց նրանց, հաղթանակ պարգևեց և գերակա դարձրեց

իրենց թշնամիների նկատմամբ՝ կատարելով այն, ինչ խոստացել էր նրանց Իր խոսքում:

﴿يَا أَيُّهَا الَّذِينَ آمَنُوا إِنْ تَنْصُرُوا اللَّهَ يَنْصُرْكُمْ وَيُثَبِّتْ أَقْدَامَكُمْ ٧﴾

«Օվ դուք, ովքեր հավատք եք ընծայել, եթե դուք զորակցեք Ալլահին, Նա ևս կզորակցի ձեզ և կամրացնի ձեր ոտքերը»: [Մուհամմադ:7] Եվ ասաց Փառավոր և Մեծարելի Ալլահը.

﴿وَلَيَنْصُرَنَّ اللَّهُ مَنْ يَنْصُرُهُ إِنَّ اللَّهَ لَقَوِيٌّ عَزِيزٌ ٤٠ الَّذِينَ إِنْ مَكَّنَّاهُمْ فِي الْأَرْضِ أَقَامُوا الصَّلَاةَ وَآتَوُا الزَّكَاةَ وَأَمَرُوا بِالْمَعْرُوفِ وَنَهَوْا عَنِ الْمُنْكَرِ وَلِلَّهِ عَاقِبَةُ الْأُمُورِ ٤١﴾

«Եվ Ալլահն անշուշտ կօգնի նրան, ով օգնում է Իրեն: Իրապես, Ալլահը Հզոր է, Ամենակարող: 40

Նրանք, ում եթե հաստատենք երկրի վրա, կկատարեն աղոթքը, կտան զաքաթը, կհորդորեն բարին և կարգելեն չարը: Եվ բոլոր գործերի վախճանը Ալլահինն է»: 41 [Ալ-Հաջ:40-41] Այնուհետ մարդիկ փոխվեցին, պառակտվեցին, անփույթ դարձան Ջիհադի հարցում, նախընտրեցին հանգիստն ու ցանկություններին հետևելը, և նրանց մեջ տարածվեցին մեղսալի արարքները, բացառությամբ նրանց, ում Ալլահը պաշտպանեց: Ուստի Ալլահը փոխեց նրանց վիճակը և նրանց թշնամուն իշխանություն տվեց նրանց վրա՝ որպես հատուցում իրենց վաստակածի համար, և քո Տերը բնավ անարդար չէ Իր ծառաների հանդեպ: Ասել է Ամենաբարձրյալը.

﴿ذَلِكَ بِأَنَّ اللَّهَ لَمْ يَكُ مُغَيِّرًا نِعْمَةً أَنْعَمَهَا عَلَى قَوْمٍ حَتَّى يُغَيِّرُوا مَا بِأَنْفُسِهِمْ﴾

«Ալլահը երբեք չի փոխի այն օրհնությունը, որը Նա շնորհել է մի ժողովրդի, մինչև նրանք չփոխեն այն, ինչ կա իրենց մեջ»: [Ալ-Անֆալ:53] Ուստի, բոլոր մուսուլմանների՝ կառավարությունների և ժողովուրդների պարտականությունն է վերադառնալ դեպի Ալլահը, անկեղծորեն երկրպագել միայն Նրան, ապաշխարհել Նրա առաջ իրենց նախկին թերացումների և մեղքերի համար, շտապել կատարել այն պարտականությունները, որոնք Ալլահը պարտադրել է, հեռու մնալ այն ամենից, ինչ Նա արգելել է, և այդ հարցում միմյանց հորդորել ու համագործակցել:

Դրա ամենակարևորներից է շարիաթական սահմանների հաստատումը, մարդկանց միջև ամեն հարցում Շարիաթով դատելը, դրան դիմելը դատաստանի համար, ինչպես նաև Ալլահի օրենքին հակասող մարդածին օրենքների վերացումը, դրանցով չդատվելը և բոլոր ժողովուրդներին Շարիաթի օրենքին ենթարկելը: Ինչպես նաև, գիտունները պարտավոր են մարդկանց խորապես ուսուցանել իրենց կրոնը, նրանց շրջանում տարածել իսլամական իրազեկություն, միմյանց հորդորել ճշմարտության և համբերության, հրամայել բարին և արգելել չարը, ինչպես նաև այդ հարցում խրախուսել կառավարիչներին: Ինչպես նաև պետք է պայքարել այնպիսի կործանարար սկզբունքների դեմ, ինչպիսիք են

սոցիալիզմը, բաասիզմը, ազգայնամոլությունը և Շարիաթին հակասող այլ սկզբունքներն ու ուսմունքները: Այդպիսով Ալլահը մուսուլմանների համար կուղղի ապականվածը, կվերադարձնի մոլորվածը, կվերականգնի նրանց նախկին փառքը, հաղթանակ կտա իրենց թշնամիների դեմ և կհաստատի նրանց երկրի վրա, ինչպես ասել է Ամենաբարձրյալը, և Նա է ամենաճշմարտախոսը:

﴿وَكَانَ حَقًّا عَلَيْنَا نَصْرُ الْمُؤْمِنِينَ﴾

«Եվ հավատացյալներին օգնելը պարտականություն էր Մեզ վրա»: [Ար-Ռում:47] Ալլահն ասաց.

﴿وَعَدَ اللَّهُ الَّذِينَ آمَنُوا مِنْكُمْ وَعَمِلُوا الصَّالِحَاتِ لَيَسْتَخْلِفَنَّهُمْ فِي الْأَرْضِ كَمَا اسْتَخْلَفَ الَّذِينَ مِنْ قَبْلِهِمْ وَلَيُمَكِّنَنَّ لَهُمْ دِينَهُمُ الَّذِي ارْتَضَى لَهُمْ وَلَيُبَدِّلَنَّهُمْ مِنْ بَعْدِ خَوْفِهِمْ أَمْنًا يَعْبُدُونَنِي لَا يُشْرِكُونَ بِي شَيْئًا وَمَنْ كَفَرَ بَعْدَ ذَلِكَ فَأُولَئِكَ هُمُ الْفَاسِقُونَ٥٥﴾

«Ալլահը խոստացել է ձեզանից նրանց, ովքեր հավատացել են և բարեպաշտ գործեր են արել, որ նրանց իշխանություն կտա երկրի վրա, ինչպես իշխանություն էր տվել նրանցից առաջ եղածներին, կամրապնդի նրանց համար այն կրոնը, որը հավանության է արժանացրել, և նրանց վախը կփոխարինի անվտանգությամբ: Նրանք Ինձ կերկրպագեն՝ Ինձ հետ ոչինչ չհավասարեցնելով: Իսկ ով դրանից հետո անհավատ կդառնա, ապա նրանք են

մեղսագործները»: [Ան-Նուր:55] Փառավորն ասել է.

﴿إِنَّا لَنَنْصُرُ رُسُلَنَا وَالَّذِينَ آمَنُوا فِي الْحَيَاةِ الدُّنْيَا وَيَوْمَ يَقُومُ الْأَشْهَادُ ٥١﴾

«Իրոք, Մենք հաղթանակ կտանք մեր Մարգարեներին և հավատացյալներին այս կյանքում և այն օրը, երբ կկանգնեն վկաները»: [Ղաֆիր:51]:

﴿يَوْمَ لَا يَنْفَعُ الظَّالِمِينَ مَعْذِرَتُهُمْ وَلَهُمُ اللَّعْنَةُ وَلَهُمْ سُوءُ الدَّارِ ٥٢﴾

«Այն օրը, երբ անարդարների արդարացումը նրանց օգուտ չի տա, և նրանց բաժին կհասնի անեծքն ու չարիքի տունը»: [Ղաֆիր:52]

Եվ Ալլահին ենք խնդրում, Փառք Նրան, որ ուղղի մուսուլմանների առաջնորդներին և նրանց հասարակ ժողովրդին, և նրանց կրոնի մեջ իմաստություն պարգևի, և միավորի նրանց խոսքը բարեպաշտության վրա, և բոլորին ուղղորդի Իր ուղիղ ճանապարհով, և նրանց միջոցով հաղթանակ պարգևի ճշմարտությանը և պարտության մատնի սուտը, և բոլորին հաջողություն տա բարության և բարեպաշտության մեջ համագործակցելու, և միմյանց ճշմարտությանը և դրա հանդեպ համբերությանը հորդորելու մեջ: Անշուշտ, Նա է դրա Պահապանը և դրա վրա Իշխողը: Եվ Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի Նրա ծառայի և առաքյալի, Նրա ստեղծածների լավագույնի՝ մեր մարգարեի և մեր առաջնորդի՝ Մուհամմադ իբն Աբդուլլահի վրա, և նրա

ընտանիքի, նրա ուղեկիցների և նրանց վրա, ովքեր հետևեցին նրա ճանապարհին: Եվ խաղաղություն ձեզ, և Ալլահի ողորմությունն ու Նրա օրհնությունները:

الفهرس

Ճշմարիտ հավատքը և այն, ինչ հակասում է նրան 2
Նախաբան 2
Հավատք Ալլահին 7
Հավատք հրեշտակներին 21
Հավատք Սուրբ գրքերի նկատմամբ 23
Հավատք Մագարեներին 26
Հավատքը Վերջին Օրին 27
Հավատքը նախասահմանության (կոդարի) նկատմամբ 28
Հավատքը բաղկացած է խոսքից և գործից: Այն աճում է հնազանդության ժամանակ և նվազում՝ մեղքերի ժամանակ: 31
Աստծո համար սիրելը և Աստծո համար ատելությունը, հանուն Աստծո եղբայրություն դրսեւորելն ու հանուն Աստծո թշնամություն ցուցաբերելը 31
Հիշատակումը նրանց, ովքեր շեղվել են այս հավատամքից և ընթացել են նրա հակառակ ճանապարհով: 35
Միայն Ալլահին երկրպագելու պարտավորությունը և Ալլահի թշնամիների նկատմամբ հաղթանակի պատճառների բացատրությունը 43

hy152v1.0 - 03/09/2026